

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ 3ԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՀԱՆՋ

Ընկերային Ապահովագրության Ազգային Մատուցի տնօրեն խորհուրդի նախագահ Մորիս Ապու Նատերը երկ կառավարությունից պահանջեց...

Ապու Նատերը կոչ ուղղեց էլեկտրոնային նախարարության 270 միլիարդ ռուբլի համարժեք գումար յանձնելու...

Ապու Նատերը քսա, որ Ապահովագրության Ազգային Մատուկին: Նշենք, որ Ապու Նատերը ալեյցուց, թէ նշեալ գումարը 5 տարիներէ ի վեր կը գտնուի էլեկտրոնային նախարարության մօտ:

ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՂՆԵՐՈՒ ԹԻԸ ԱԸ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ

«Միտըլ Իսթ» ընկերությունը ընդհանուր տնօրեն Մոհամեդ Հուրի կողմէն յայտնեց, որ այս տարւան ընթացքին Լիբանան այցելած ճամբորդներուն (ներառեալ պրօսաշրջիկները) թիւը հասած է 2 միլիոն 750 հազար ճամբորդի, ինչ որ վերջին անգամ պատահած է 1974ին:

Հուրի յայտնեց, որ յառաջիկայ տարիներու ընթացքին գործակցութիւն կը գոյանայ «Սթալ թիմ»ի հետ, որովհետեւ նշեալ ընկերութեան հետ գործակցութեան պարագային «Միտըլ Իսթ» ընկերութիւնը ուղղակիօրէն պիտի օգտուի անոր տոկոսներէն, եւ պիտի կարենայ տարեկան 30 միլիոն տոյարի շահ ապահովել միջազգային համաձայնագիրներ կնքելով:

Հուրի անդրադարձաւ կառավարութեան կողմէ «Միտըլ Իսթ»ի պահանջները գործադրելու մասին տրուած, բայց չգործադրուած կարգ մը որոշումներու, նկատել տալով, որ բարեկարգումի աշխատանքը կարիքը ունի հետեւողակաւորութեան:

Հուրի ալեյցուց նաեւ, որ Պէյրութի Միջազգային օդակայանը աշխարհի ամենէն ապահով օդակայաններէն է:

ՊԻՏՏԵԻ ՆԱԽԱԳԻԾԻ ՌԻՍԿՆԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹ ՊԵՏԷ Է ՏԱԼ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրրի երկ կառավարութեան կողմէն յայտնեց, որ խորհրդարանը ստիպուած է 2004ի պետական պիտուէի նախագիծը վաւերացնելու որոշ պայմանաժամի մը ընթացքին եւ նկատել տուաւ, որ խորհրդարանը պիտի չըն-

դունի նախագիծ մը, որ կ'անտեսէ որոշ նախարարութիւններու կառավարութեան կը տրամադրեն իրենց յատկացումները:

Պրրի երկ խորհրդարանին մէջ երեսփոխաններու հետ ունեցած իր շարքաւորուած հերթական նիստին ընթացքին քսա, որ խորհրդարանը հարկ եղած ժամանակը պիտի տրամադրէ ուսումնասիրելու պիտուէի նախագիծը, որպէսզի կարենայ ժողովուրդին տրամադրել հարկ եղած կարիքները:

Պրրի հարց տուաւ, որ ինչպէս կարելի է անտեսել Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուկին կարիքները եւ կառավարութեան պատասխանատուութիւնը անոր հանդէպ:

Պրրի ընդգծեց, որ

կարելի է անտեսել այնպիսի նախարարութիւններ, որոնք կառավարութեան կը տրամադրեն իրենց յատկացումները:

Պրրի նշեց նաեւ, որ մերժելի է երկրին բարգաւաճման եւ ընկերային մարզերու հանդէպ ցուցաբերուած անտարբերութիւնը այն լուրջ գիտակցութեամբ, թէ կարիքներու ապահովումը կը բազմապատկէ նիւթական բացը, որովհետեւ յաւելեալ միլիոններու դուր կը բանայ:

Պրրի ալեյցուց նաեւ, որ պաշտօնակատներու հողերուն վրայ խրայեցեալ նուստերու կողմէ տակաւին շարունակուող բռնարարները մաս կը կապեն պաշտօնակատներու սպանդի ենթարկելու ծրագիրին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՕՂԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԽԱԽՏՈՒՄ

Բանակի հրամանատարութիւնը երկ հրապարակեց պաշտօնական հարցազրուեցիւն մը, որուն մէջ նշեց, թէ իսրայէլեան 8 օդանաւեր երկ ժամը 12:31ին Թուրքիոյ կառավարչիւնը հարձակումի կատարեցին Լիբանանի, Պէյրութի, Լեռնայի լեռնաշխարհի եւ Հիւսիսի վրայ:

Օդուժը Պէյրութի վրայ խզեց ճայնի պատը: Ապա կէսօրէ ետք ժամը 1:00ին օդանաւերը ուղղուեցան դէպի Հարաւ: Նշենք, որ նախանցեալ օր կէս գիշերին իսրայէլեան օդուժը Թուրքիոյ կառավարչիւնը հարձակումի կատարեց, Պէյրութի, Ժիպէյի եւ Խալտի վրայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԻԲԱՆԱՆԻ մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, ընկերակցութեամբ սուտանցի իր պաշտօնակից Ահմէտ Պիլիթին, երկ այցելեց հարաւային Լիբանան, խորհրդարանի արտաքին հարցերու յանձնախումբին հրաւերով:

ՔՐԵՍՓՈՒՍ Փիեռ Ժեմայէլ երկ կողմէն պարտաւորութիւն յայտնեց աշխատանքական ընդհանուր գործադուլին, որ տեղի կ'ունենայ այսօր: Ժեմայէլ շեշտեց, որ աշխատանքական պահանջները իրաւունքի եւ արդարութեան պահանջներ են, դիտել տալով, որ հարկ է երկրին ընկերային եւ տնտեսական մակարդակը բարելաւել:

ՄԱԿԻ մէջ արաբ նախկին ներկայացուցիչներու Միջազգային Միութիւնը երկ աւարտեց նախանցեալ օր սկսած իր խորհրդածոյողութեամբ իրապարակեց պաշտօնական հարցազրուիւն մը, որուն մէջ շեշտեց, թէ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն կարելի է հաստատել բացի պաշտօնակատներու տագնապի վերջնական լուծումէ: Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ ժողովը նշուող կը կազմի ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին եւ անոր գործունէութեան մէջ կը տեսնէ իրաքի գերիշխանութեան վերականգնման առաքելութիւնը:

ՀԻԻՍԻՍՍՅՈՒՆ Լիբանանի պաշտօնակատներու խորհուրդին երկ շեշտեցին, որ ամերիկեւ իսրայէլեան ստիպական սպանդիքները չեն կրնար սուրիական պաշտօնակատներու կեցուածքները հարուածել, որովհետեւ սուրիական կեցուածքները հիմնուած են ազգային սկզբունքներու վրայ: Կուսակցութիւններու համախմբումը շեշտեց, որ կը մերժէ 2004ի պետական պիտուէի նախագիծին մէջ որեւէ յաւելեալ տուրք:

2004Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏԵԻ...

Ծարուակուած Ա. էջէն մարդուած պիտուէին յայտնեց, որ հարկ է անոր տրամադրել յաւելեալ 15 միլիարդ ռուբլի գումար մը, որպէսզի գործադրուին պրօսաշրջութեան մարզի բարգաւաճման ի նպաստ մշակուած ծրագիրները:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ Կիրակի, 26 Շոկտեմբեր 2003, Գիւտ Խաչի Կիրակին՝ եկեղեցույ ամուսնակցութեան տօնն է: Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատարցու ոչխար մուրհիլ եւ կամ մասնակից դառնալ քրիստոնէութեան, թող բարի ըլլան կապ պահել քրիստոնէութեան գրասենեակը: Հեռ. 01 / 981102/3 թիւին, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ կեսօրը ետք ժամը 1:00:

ԶԱԻԱՆՔԻ ՕՐԵՐ 3-8 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2003

ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ - ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԳՈՐԾԱԿՑԱԲԱՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ԳԻՄԱՍ Է ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԻ ԴԷՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԻՒ ՄԸ ՀՈԿՏ. - ՆՈՅՏԵՄ. ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ ԱՅՍ ԱՌԹԻՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՔԻՆ ՎՐԱՅ ԸՆՏՐԱԾ Է ԿԱՐԳ ՄԸ ՀԻԻԱՆԳԱՆՈՅՆԵՐ ԵՒ ՄԻԱՅՆ ՍԷՆ ՄԱՐՔԸ ԻԲՐԵԻ ԱԽՏԱԾԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԵՐՈՒՄ MAMMOGRAPHY-ECHORGRAPHY ՆԿԱՐԸ ՍԱԿԸ ՈՐՈՇՈՒԱԾ Է 35.000 Լ.Ո. ՄԻԱՅՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԹԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԳԻՄԵԼ ՈՒՂՂԱԿԻ ԱՖՀԻԼ ԳՐԱՍԵՆԵԱԿ ՀԵՌ. 01/242556-7 ԿԱՄ ՍԷՆ ՄԱՐՔ ԺԷԹԱՌԻԻ ԵՒ ԶԱԼՔԱ ԿԵԴՐՈՆՆԵՐ ՀԵՌ. ԺԷԹԱՌԻԻ - 01-566633 - 01-576565 - 03-217297 ԶԱԼՔԱ - 01-885829 - 01-891464 - 03-503603 ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ - ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ

ԱՃԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ, ՍԵՆՏԻՔԱՅԱԿԱՆ ...

Ծարուակուած Ա. էջէն ՆՄԱՆ բնոյթի կոչ մը ուղղեց նաեւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուկի եւ բժշկութեան հատուցման, ինչպէս նաեւ Լիբանանեան համալսարանի դասախօսներու լիկան: ՍՁԱՏ առեւտուրի սենտիքներու համադաշնակցութիւնը երկ կ'օրակցութիւն յայտնեց աշխատանքներու պահանջներու հատուցման նպատակով կայանալիք ցոյցին եւ քսա, որ կը մասնակցի անոր կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ 1:00 դադարեցնելով աշխատանքը: Այսօրուան ցոյցին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ երկրաչափներու, օդայուներու, ինչպէս նաեւ հիւսիսային Լիբանանի աշխատանքներու եւ երկրագործներու սենտիքները:

ԸՄՍԱԶՊԱՅԻՆ ԸԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ Ելոյթ կ'ունենան Հայրենի միջազգային դաշնակաւար ԱՐՄԵՆ ՊԱՊԱԽԱՆԵԱՆ Հայրենի տաղանդաւոր ջութակաւար ՄԱՐՏԻՆ ԵԱԻՐԵԱՆ Հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էստեպլի հոյ»ին մէջ Տոմսերը ստանալ Down Town BHV Jnah BoxOffice Համազգայինի գրախանութն (Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), Տիքոթք Գեքա (Պուրճ Համուտ), Սթիւտի Վաչէ (Համըն), Obelix գրախանութ (Ամերիկա) եւ Ելոյթի օրը կիշէն կամ հեռաձայնել 01 - 249375 եւ 01 - 265899 թիւերով:

Հ.Յ.Գ. «ԴՐՈ» ԿՈՄԻՏԷ ԲԱՐՈՉՁԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՈՒՄ ՎԱՐԴԱՆ ՇԱՏՊԱԶԻ ՇԻՐԱՔԱՐԻ ԲԱՅՈՒՄ •ՇՈՒԿԵԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ •ՅԻՃԱՍԱԿԻ ԽՕՍԷ Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Շոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:30ին, Յըրոն Շըպպէի Ազգային գերեզմանատան մէջ: Ծանօթ. Երբեմնը ապահովուած է Արագածի Հ.Յ.Գ. «Դրօ» ակումբէն, առաւօտեան ժամը 10:00ին:

ԿՈՒՐՈՒԻ •Պաշտօնեայ մը՝ յետմիջօրեի աշխատանքի համար: Գիմել՝ հեռ. 03-782323: ԿՈՒՐՈՒԻ •Վաստատութիւն մը կարիքը ունի ինքնաշարժի վարորդի մը, ապրանք փոխադրելու եւ տեղադրելու համար: Գիմել՝ հեռ. 03-304920:

«ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՅՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵՑԱԿ
Հ. Յ. Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ»
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբեր 12-ին 19 Հունգարիոյ մէջ տեղի ունեցաւ «Միջազգային Ֆայրն Եարթու՝ Ընկերվար Դաստիարակչական Միջազգայնական» կազմակերպութեան նախաձեռնած ուսումնական ծրագիրը «Ինչպէս վարձագցնել երիտասարդական կազմակերպութիւնները» նիւթին շուրջ:

Վերոնշեալ կազմակերպութիւնը կը վբարդի երիտասարդութեան եւ յատկապէս երեխաներու իրաւունքներու պաշտպանութեամբ: Հ. Յ. Գ. երիտասարդականը անդամ է այս կազմակերպութեան:

Ծրագիրին մասնակցած են շարժումի անդամ Սպանիոյ, Անգլիոյ, Շուէտի, Եսթոնիոյ, Լատվիոյ, Ռուսիոյ եւ եւրոպական այլ երկիրներու ընկերվարական եւ ընկերվար - ժողովրդավարական կազմակերպութիւններու երիտասարդականներու ներկայացուցիչներ: Հ. Յ. Գ. երիտասարդականը ներկայացուցած է Հ. Յ. Գ. Հարատանի «Նիկոլ Աղբալեան» Ռուսոնովական Միութիւնը, որ միակ անդամն է կովկասեան շրջանին:

Ծրագիրին ընթացքին մասնակիցները ունկնդրեցին դասախօսութիւններ, հանդիպումներ ունեցան քաղաքական կուսակցութիւններու ղեկավարներու եւ Հունգարիոյ Ընկերվարական կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ: Անոնք նաեւ ծանօթացան երիտասարդական կազմակերպութիւններու վարձագցման արդի ձեւերուն, մտքեր փոխանակեցին երիտասարդութիւնը յուզող հարցերու, յատկապէս երիտասարդութեան շրջանին ընկերվարական եւ ժողովրդավարական արժէքներու տարածման շուրջ: Բննարկուեցան երիտասարդութեան դերը պետութեան կայացման մէջ, երիտասարդները ինքնուրոյն որոշումի մղելու, անոնց քաղաքական հետաքրքրութիւնները աշխուժացնելու, երիտասարդական կազմակերպութիւններու միջեւ համագործակցութիւնի ծաւալելու միջոցները:

« ԵՐԿԻՒՂ ԱԺՈՒԹ ԵԱՄԲ ՄՕՏԵՅԷՔ... »

Շարունակուած Ա. Էջէն

Հայ Մշակոյթի ամուսնի Հոկտեմբերին Կուրադիպող հայ գիրքի տարեկան ցուցահանդէս - վաճառքը, այս տարի եւս սկսաւ Թարգմանչաց վարդապետներուն նուիրուած ժամերգութեամբ: Միաբան հայրեր, սարկազաններ ու դպրեվանքի սաներ ժողովրդային թափօրը առաջնորդեցին դէպի «Կիլիկիա» թանգարանի մուտքը, ուր բացման խօսք արտասանեց Նորայր Ծ. վրդ. Աշրգեան: Հայ սուրբը անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մշակութային առաքելութեան՝ յիշելով վերջին տարիներուն բազմաթիւ հատորներու յոյս ընձայումը Անթիլիասի տպարանին:

Բացման հանդիսութեան գեղարուեստական յայտագիրով իր մասնակցութիւնը բերաւ դպրեվանքի երգչախումբը՝ ղեկավարութեամբ Մակար արք. Աշգարեանի, եռաձայն կատարումով ներկայացնելով Թարգմանչաց նուիրուած շարականներ, ու հայ մշակոյթին նուիրուած ազգային երգեր:

Վեհափառը հայ գիրքի ցուցահանդէսին առիթով իր մտածումները յայտնեց՝ ցոյց տալով այն բծախնդիր մտեցումը, որ ցոյց կու տայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, իբրեւ սփիւռքեան վառ օձախ ու մշակութային յոյսի փարոս: Վեհափառը յատկապէս ըսաւ. «Հայ գիրքը նուիրակներու արժէք է, ինչպէս եկեղեցուն մէջ սարկազանը Աւետարանը կարդալէ առաջ կ'ըսէ «երկիւղածութեամբ լուարուք», որովհետեւ Աւետարանը սրբութիւն է, յաւիտենական արժէք է, նոյնպէս այլ Մ. Մեսրոպ Մաշտոց մեկի կ'ըսէ երկիւղածութեամբ մօտեցէք հայ գիրքին: Երկիւղածութեամբ հայ գիրք գրեցէք, երկիւղածութեամբ հայ գիրք տպեցէք եւ երկիւղածութեամբ հայ գիրք կարդացէք: Վա՛յ մեկի, եթէ հայ գիրքին նկատմամբ երկիւղածութիւն չունենանք: Այլ խօս-

քով՝ սէր, յարգանք, նուիրում, կապուածութիւն ու հաւատք չունենանք: Այս բոլորը երկիւղածութիւն կը նշանակեն: Երբ կենքի մէջ արժէք մը կը տեսնենք, անոր պէտք է մօտենանք երկիւղածութեամբ: Հայ գիրքը արժէք է: Վա՛յ այն մարդուն, ով այլ ըլլայ, ինչ հանգամանքի տէր այլ ըլլայ, երբ հայ գիրքին երկիւղածութեամբ չի՛ մօտենար: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը երկիւղածութեամբ մօտեցած է հայ գիրքին ու պիտի շարունակէ այդպէս ըլլալ, եւ ճիշդ ատոր համար հայ մշակոյթը իր առաքելութեան կենսական տարածքներէն մէկն է: Վկայ այս Մ. Սթոնի տպած կ'ըսէրը՝ իբրեւ որակ եւ իբրեւ քանակ: Վկայ՝ հայ մշակոյթի կայունօրէն մէջ կատարուող նախաձեռնութիւնները, Անթիլիասի մէջ ու Անթիլիասի մէջ մտքով մեր թեմերուն մէջ: Այս ցուցահանդէսը մարտահրաւէր մըն է դառնալու հայ գիրքին եւ երկիւղածութեամբ մօտենալու անոր»:

Կաթողիկոսարանի գրատան վարչութեան կազմակերպութեամբ կայացած սոյն ցուցահանդէս - վաճառքին իրենց մասնակցութիւնը բերին կաթողիկոսարանի, «Համազգային»-ի, «Գառնի», «Տօնիկեան», «Ոսկեդար», «Շիրակ» հրատարակչատունները եւ անհատ հեղինակներ: Բացման հանդիսութեան պաշտօնական բաժինէն ետք, մշակութեան ներկայից ծառայողները ծառայողները վերջին հրատարակութիւններուն:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ԶԱՅՏԱԳԻՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:40 «Առաւօտեան տուն»
- 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 1:30 Հայաստանեան լուրեր
- 3:00 Արաբերէն յայտագիր.
- հարցազրոյց արիւստավար ղերասաններու սենտիքայի նախագահ Իհսան Սատեքի հետ
- 8:00 «Ընթացիկ».
- կը ներկայացուի Յովհաննէս Յովհաննիսեանի բանաստեղծութիւնները

السوق
ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ
 المستقبل
 السفير
 النصار
 الديار

2004ի պետական պիտէի քննարկման համար գումարուած նախարարաց խորհուրդի արտակարգ ժողովը, անոր ընթացքին արժարձուած թղթածրարները եւ որդեգրուած կեցուածքները կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն տեղական կեանքին եւ իրադարձութիւններուն վերաբերող գլխաւոր լուրերը:

Միջազգային եւ շրջանային լուրերու կարգին հիմնական տեղ կը գրաւեն իսրայէլի համար հայ մշակոյթը իր առաքելութեան կենսական տարածքներէն մէկն է: Վկայ այս Մ. Սթոնի տպած կ'ըսէրը՝ իբրեւ որակ եւ իբրեւ քանակ: Վկայ՝ հայ մշակոյթի կայունօրէն մէջ կատարուող նախաձեռնութիւնները, Անթիլիասի մէջ ու Անթիլիասի մէջ մտքով մեր թեմերուն մէջ: Այս ցուցահանդէսը մարտահրաւէր մըն է դառնալու հայ գիրքին եւ երկիւղածութեամբ մօտենալու անոր»:

2004Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏԵՆ

«Նահար» գրած է, թէ «պետական պիտէի պատերազմ»ին առաջին նիստը տարւածուած է լուրջ տեցաւ դրական համայնութեամբ, մինչ միւս կողմէ միջազգային ընտանիքը կը շեշտէր, թէ պետք է յարգել «Փարիզ - 2»ի պայմանները եւ խոստումները:

Նախարար Սինիորա «Նահար»ի թղթակցին ըսած է, թէ նիստը նախատեսուածէն շատ աւելի լաւ էր:

«Նահար» օրաթերթը լոյս ընծայած է նախագահական ընտրութիւններուն վերաբերող վիճակագրութիւն մը, որուն մէջ մասնակցողներուն 83 առ հարիւրը կողմնակից են Սֆէյր պատրիարքի սահմանադրութիւնը անփոփոխ պահելու կարծիքին, 15 առ հարիւրը համաձայն է նոր նախագահի մը ընտրութեան, իսկ 18 առ հարիւրը կ'ուզէ երկարաձգել ներկայ նախագահին իշխանութիւնը:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ նախագահ Լահուտ Սինիորայէն պահանջեց ցարդ ստեցուած յատկացումները կատարել հաստատութիւններուն եւ վարչութիւններուն: Ըստ թերթին, Միջազգային Դրամատունը վտանգաւոր զգուշացում մը լրեց Լիբանանի, զայն դնելով երկրին տնտեսութիւնը բարելաւելու կամ դրամական վերվայ-

րումներ դիմագրաւելու երկրնտրանքին առջեւ:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Բագրատունի լիբանանցիները հրապարակեցին արժարձուած թղթածրարները եւ որդեգրուած կեցուածքները կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն տեղական կեանքին եւ իրադարձութիւններուն վերաբերող գլխաւոր լուրերը:

«Անուար» լուսարձակի տակ առած է իրականութիւնը մերժող ցոյցերու կազմակերպումը եւ միւս կողմէ ներքին ճակատի վրայ եղած ընդլայնակեցումը, որուն կրնան ոտնակոխել երկրին առաջնահերթ պահանջները:

Ըստ «Տիար»ի, պիտէի քննարկման առաջին նիստը կայացաւ հանդարտ, առարկայական եւ լուրջ տեցաւ դրական համայնութեամբ, մինչ միւս կողմէ միջազգային ընտանիքը կը շեշտէր, թէ պետք է յարգել «Փարիզ - 2»ի պայմանները եւ խոստումները:

ԻՐԱԿԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԵՐ

«Սաֆիր» գրած է, թէ Սիւսանի կը փորձէ փնտրել ընկերվարական մէջ ձեռքարկուեցան տասնեակ իրաքցիներ, որոնց մէջ Սատրի ներկայացուցիչը: Ըստ թերթին, Իսրայէլ պատրաստակամութիւն յայտնած է օժանդակելու Իրաքի վերանաոռուցման աշխատանքներուն:

ԻՐԱԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԱՍՄԱԼԼԱՆԵՐԻՈՒԹՅՈՒՆ

«Լիուս» նշած է, թէ յատկացումներ կատարող երկիրներու համագումարը պիտի սկսի Մատրիտի մէջ. Ռամադանի իր յայտարարեց, թէ ամերիկեան զօրքերը ամբողջութեամբ պիտի փոխուին յատաշրկայ տարւածակներու ամբողջ տեղ պիտի առնեն այլ ամերիկեան գունդեր:

«Նահար»ի համաձայն, Ռաշիդկըն կը յայտարարեց, թէ հաւանական է, որ ամերիկեան ուժերը Իրաքի մէջ մնան մինչեւ 2005 թուական:

ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Սաֆիր» գրած է, թէ Մահաթիր իր վերջին նետերը կ'արձակէ հանգստեան կոչուելէ առաջ եւ կը յայտնէ, թէ իր խօսքերուն շուրջ ստեղծուած աղմուկը կը փաստէ, որ հրեաները աշխարհը կը ղեկավարեն:

«Մուսթաքպալ»ի համաձայն, Ռաշիդկըն յայտնած է, թէ Սուրիա կը գործակցի Մատրիտի դրամները պահպանելու գործընթացին, իսկ իսրայէլեան հետախուզիչ կազմակերպութեան պարիսպի կառուցման հարցը:

«Մուսթաքպալ» ղիտել տուած է, թէ Արաքի կոչ կ'ուղղէ աշխարհին կասեցնելու Իսրայէլի ինտերօրինը: Թերթին համաձայն, Եգիպտոս կը փորձէ միջնորդել եւ տեսակցութիւն մը կայացնել Փաուրի եւ Քորէյի միջեւ:

ԵՐՈՂԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԻՐԱՅԻ ՄԷՋ

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Իրան կա-

ԼՕԽԻ «ԱՐԱՔՍԻ ՊՈԼԼՂՈՒՐԾԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲԺԶԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ

ԿԻՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաճոյքով կը յայտարարենք, թէ 2003-2004 տարեշրջանի կիներու յատուկ համակարգիչի, արաբերէն եւ անգլերէն լեզուներու դասընթացներու արձանագրութիւնները կը կատարուին 23-է 30 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00-է 12:00 ԼՕԽԻ «Արաքսի Պոլլղուրծեան» ընկերաբժշկական կեդրոն Ա. յարկ, Ընկերային Ծառայութեան Գրասենեակ:

Յաւելեալ մանրամասնութեանց համար կը խնդրուի անձամբ ներկայանալ:

ԼՕԽԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԿԻՒՂ ԸՆԿԵՐԱԿԱՆ Ա. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 27 Հոկտեմբեր 2003ի առաւօտեան ժամը 10:00ին, «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» Մարզամշակութային համալիրին մէջ: ԾԱՆՕԹ.- Երբեքէկը ապահովուած է Անթիլիասի «Սիմիթեան» շէնքերու մուտքին, առաւօտեան ժամը 9:45ին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Le Savoir Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
 Gemmayzé, (01)447000-445396
 (03)627728/9
 Fax: (01)265187-582357
 E-Mail: gasons@dm.net.lb
 www.ayanian.com

Կազմակերպութեամբ՝
Հ. Յ. Գ. «ԱՂԲԱԼԵԱՆ» ԿՈՄԻՏԵ
ՂԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԻՐ

ԾՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՂԱՍԸՆԹԱՅԸ (FIRST AID)

Գործակցութեամբ՝
ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՆ
 և
ԼՕԽԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՒՂ ԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» Մարզամշակութային համալիրին մէջ, Նոյեմբեր ամսուան երկրորդ շաբթուրդէն սկսեալ:

Յաւելեալ տեղեկութեանց եւ մանրամասնութիւններու համար դիմել հետեւեալ թիւերուն՝ 04-723197, 03-862519 եւ 03-881847:

Առաւելագոյնը կապ հաստատել մինչեւ Նոյեմբեր 3:

Դասընթացքի արարին մասնակցողները վկայագիր պիտի ստանան Լիբանանի Կարծիր Խաչէն:

ԵՐՈՂԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԻՐԱՅԻ ՄԷՋ

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Իրան կա-

ՆԱՍԱԿ՝ ԸԱՅՐԵՆԻՔԷՆ

ԱՐՑԱՆԸ՝ ՄԵՐ ՈՒԺԵՐՈՎ

Հայաստանի հիմնական ճամբարները նորոգ-ւելեցան եւ սարքուեցան գլխավորաբար «Լինսի» հիմնադրամի տրամադրած լայն միջոցներով: «Լինսի»-ն ալ հայկական է, անշուշտ, սակայն ան ունի իր սահմանափակումները, եւ այնպէս կը բուռնի, քէ մօտիկ ապագային կարելի պիտի չըլլայ, որ ան կարենայ իր ձեռքը երկարել նաեւ Արցախին:

Արցախի ներքին ճամբարները, մասնաւորաբար արդէն իսկ ձեռնարկուած հիւսիսը հարաւին կապող ուղիի ասֆալտապատումը համագործակցելով պարտադրութիւն մըն է, որ ամէն գնով եւ կարելի արգելաբանման պէտք է իրագործուի: Զանազան հիմնադրամներ կենսական նշանակութիւնը քէ՛ ուղղակի տակաւն եւ քէ տնտեսական զարգացման տեսակետէն անվիճելի է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հօգուտը, անոր կենսունակութիւնը կապուած է այդ տարածքով ոչ այնքան փոքր, սակայն բնակչութեամբ բաւական ճօշկ հայրենակտորի բարգաւաճումին, իսկ այդ բարգաւաճումը չի կրնար իրականանալ առանց գիւղերը մայրաքաղաքին, շրջաններու կեդրոններուն ու իրարու հետ կապող ներքին ճամբարներու ցանցի մը:

Վերաբնակեցման որեւէ ծրագիր, Արցախի բնակչութիւնը իր հողին վրայ պահելու եւ նորեկներով անոր թիւը բարձրացնելու որեւէ առաջադրանք անհիմատ կը դառնայ, եթէ երաշխաւորուած չէ այդ մարդոց արժանապատիւ կենցաղը վարելու տարրական իրաւունքը: Զրկանքներ աչք առած նուիրելիներով դժբախտաբար չենք կրնար պահուիլ բնակչութեան նկատմամբ իր սեփական իրաւունքը: Ոչ այլ Հայաստանի մէջ:

Հետեւաբար այս հանգրուանին հիւսիս-հարաւ մայրուղիի աւարտը նախապայման է, առաջնահերթ է: Անոր պէտք է յաջորդեն այլ ճամբարներ: Իմ համեմատ կարծիքով, նաեւ Մարտակերտէն Քարվաճառը ու Վարդգէսիտով Հայաստան նահապարհը նույնքան անելիանալի սկսած է դառնալ: Քարվաճառը վերաբնակեցնելու բոլոր ծրագիրները միշտ կիսատ ու պակասաւոր պիտի մնան՝ առանց նման կապի մը իրականացման:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամին միջոցով նման տարողութեամբ ծրագիրներ իրականացնելու փառասիրութիւնը միշտ ալ ոգեւորած է գիտ: «Լինսի»-ի հիմնադիրին նման մարդուն այլ յարգանքը շահելու համար, կը կարծեմ, որ անհրաժեշտ է այդ փառասիրութեամբ շարժիչը ազգովին: Համեմատութիւնները կրնան սխալ եզրակացութիւններու տանել, սակայն կրնան նաեւ խթան հանդիսանալ՝ արժանապատուութեան հարցի վերաձեւումը գէթ մեր հաւաքական կարելիութիւնները բազմապատկելու հիգիերը: Ժամանակին այդպիսի մարտահրաւեր մը ստացած է Համահայկական Հիմնադրամը, երբ Գորիս-Ստեփանակերտ մայրուղիին շինարարութեան համար հանգանակութեանց ընթացքին «Լինսի» կամ Քրքը Գրքորեան անունով անբնութագրելի հայրերին մեր բոլոր նուիրաբերածը կրկնապատկելու նախընթացը ստեղծեց:

Բախտաւոր ենք, որ Արցախը այսօր խաղաղութեան մէջ է եւ իր վերքերը բուժելու անհրաժեշտ պայմանները ստեղծած է իր պետականութեան ճամբով: Ազատամարտին մէկ կամ անելի զաւակ գոհաբերած արցախցի իւրաքանչիւր ընտանիքի նակատագիրով մտահոգուած հազարաւոր հայրերին կան սփռուած աշխարհի բոլոր կողմերը: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը ունի բոլոր բարոյական եւ իրաւական հիմքերը դառնալու այդ սփռուած կարելիութիւնները միաւորող ու զանոնք դէպի ազգային հրատապ ծրագիրներու իրականացման ուղղորդող միջոց:

Հայաստանի մէջ այլ այսօր գոյացած է խաւ մը, որ ունի այնքան միջոց, որ կրնայ կարելու ներդրում ունենալ համագային նշանակութեամբ որեւէ ծրագրի իրականացման: Այսօր արդէն հայաստանեան երկնակամարին վրայ կ'երելին հսկայ հարստութեան տեր բարերարներու նոր հոյ մը, որոնք կրնան օրինակ դառնալ տակաւին շատ ու շատ ուրիշներու եւ միանալով սփիւռեան իրենց հայրենակիցներուն՝ հիմնադրամը դարձնել իրապէս համահայկական:

Գուրգուրանք այս գաղափարին վրայ: Չփորձենք որեւէ ժամանակ որեւէ պատճառով քաղաքականացնել գայն: Չփորձենք կայսի գայն այս կամ այն պահու իշխանաւոր որեւէ խաւի շահերուն: Նման փորձ աղետալի հետեւանքներ կ'ունենայ տեղաբնակից, վարկաբեկելով այդ կանոնը՝ ուժերու անհիման վատնումի դուրս բանալով: Միեւնոյն ժամանակ պահանջող ըլլանք անոր դեկից վրայ գտնուողներէն, որ ցուցաբերեն համապատասխան բարձր գիտակցութիւն, ազգային առաջնահերթութիւնները ժողովրդական լայն զանգուածներուն հրամցնելու ու զանոնք այդ խնդիրներու լուծման հիգիերուն լծելու հիմնաքին:

Կը յաջողի այս գաղափարը, եթէ, օրինակ՝ իր ազգային կառոյցները ծանր նիւթական վիճակի մէջ տեսնող իրապէսահայր իմանայ, որ այսօր առաջնահերթութիւնը իսկապէս Արցախն է եւ կ'արժէ գրկակցելու երթալով նուիրաբերել այդ նպատակին, դիմանալ, որովհետեւ վաղը արդէն վստահ պիտի ըլլայ, որ առաջնահերթութիւնը պիտի տրուի դժուարութեան մատուած սփիւռեան օճախներուն, ու այդ պարագային արդէն նուիրակ արցախցի պիտի կարենայ իր լուծման բերել այդ հիգից:

Հիմա՝ հերթը Արցախի հիւսիս - հարաւ մայրուղիին է:

ԱՐՑԱԿՆԵՐ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՀՍԿԱՆ

Մեծանուն երաժիշտ եւ յորհնող Արամ Խաչատուրեանի ծննդեան հարիւրամեակը այս տարի կը տօնուի մեծ շուքով՝ հայաստանեան, սփիւռքահայ եւ միջազգային մակարդակներու վրայ:

Այս տօնակատարութիւններուն իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Համագային Լիբանանի Զրջանային Վարչութիւնը՝ կազմակերպելով մշակութային ձեռնարկներու շարք մը: Հոկտեմբերի սկիզբը տեղի ունեցած «Բարեկամութիւն» պարախումբի ելոյթներուն կը յաջորդէ դաշնակահար Արմէն Պապախանեանի եւ ջութակահար Մարթին Եաւրեանի ելոյթը, որ տեղի կ'ունենայ Զաբաթ, 25 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 8:30ին, «Էստալի Եոլ»-ի մէջ: Այս առիթով անգամ մը եւս մեր ընթերցողներուն կը տրամադրենք Արամ Խաչատուրեանի ասպարեզին մասին որոշ տեղեկութիւններ:

Արամ Խաչատուրեան 20րդ դարու մեծագոյն հայ երաժշտահասններէն է: Համաշխարհային երաժշտութեան մէջ անոր ուղիներն ինքնուրույն է եւ անոր կենսագրութիւնը անսովոր՝ նման հռչակի մը համար:

Արամ Խաչատուրեան ծնած է 6 Յունիս 1903ին, Ռիֆիլիս:

Զաւակն է արհեստաւոր Համեստ ընտանիքի մը, որուն անդամները արհեստավարժ երաժիշտներ էին, սակայն արհեստի, երգեցողութեան ու ժողովրդական երաժշտութեան նկատմամբ յատուկ սէր ունէին: Մանուկ Արամ մեծապէս սպաւորած է իր մօր երգեցողութեամբ:

Փոքր տարիքին երաժշտական կրթութիւնը չունենալուն պատճառով, Արամ յոռովութեամբ կը վերադառնար իր սիրած ու ծանօթ երգերը հօր հին հայնամուրին վրայ եւ փող կը նուագէր դպրոցական նուագախումբին մէջ:

1921ին, երբ Արամ 18 տարեկան էր, մեծ եղբայ-

րը՝ Սուրէն, որ Մոսկուայի մէջ ընթացող էր, հրահայ երաժշտահասններէն է: Համաշխարհային երաժշտութեան մէջ անոր ուղիներն ինքնուրույն է եւ անոր կենսագրութիւնը անսովոր՝ նման հռչակի մը համար:

Արամ Խաչատուրեան ծնած է 6 Յունիս 1903ին, Ռիֆիլիս: Զաւակն է արհեստաւոր Համեստ ընտանիքի մը, որուն անդամները արհեստավարժ երաժիշտներ էին, սակայն արհեստի, երգեցողութեան ու ժողովրդական երաժշտութեան նկատմամբ յատուկ սէր ունէին: Մանուկ Արամ մեծապէս սպաւորած է իր մօր երգեցողութեամբ:

Փոքր տարիքին երաժշտական կրթութիւնը չունենալուն պատճառով, Արամ յոռովութեամբ կը վերադառնար իր սիրած ու ծանօթ երգերը հօր հին հայնամուրին վրայ եւ փող կը նուագէր դպրոցական նուագախումբին մէջ:

1925էն ետք իր յաջողութիւնները արագօրէն կը զարգանայ եւ իր երախայրիքը կը հրատարակուի նոյն տարին:

24 տարեկանին Խաչատուրեան կ'ընդունուի Մոսկուայի բարձրագոյն



երաժշտանոցը, ուր իր նախկին ուսուցիչին կողմէն կ'ունենայ Նիքոլայ Միսակովսկին:

Պէնզ (1927), ջութակի եւ դաշնակի Սոնատա (1932), դաշնամուրի «Թոբաթա» (1932), Պարային շար (1932), քլարինէթի, ջութակի եւ դաշնամուրի եռեակը (1932) իր վաղ ժամանակաշրջանի նշանաւոր գործերէն են:

1933ին Խաչատուրեան կ'ամուսնանայ երաժշտահայ Նինա Մակարովայի հետ, որմէ կ'ունենայ զուակ մը՝ Կարէն: Ան նաեւ ունէր դուստր մը՝ Նունէ, նախորդ կնոջմէ:

1934ին Խաչատուրեանի առաջին ճամբանուգը շնորհից կերպով հնչեց իր բնական երաժշտանոցի աւարտաճառ: Համարաւոր ընդունուած էր Հայաստանի խորհրդայնացման 15ամեակին: Առաջին կատարումը տեղի ունեցած էր 1935ին, եւ որ Խաչատուրեանը դասեց Մոսկուայի երաժշտանոցի նշանաւոր շրջանաւարտներուն Սերգէյ Դանիէլէի, Ալեքսանդր Սքրիպպինի եւ Սերգէյ Ռախմանինովի կողքին:

Հեղինակ է բազմաթիւ քոնչերթներու, որոնք նուիրուած են աշխարհահռչակ կատարողներու: Դաշնամուրի քոնչերթին նուիրուած է դաշնակահար Լեւ Օպորինի (1936), ջութակի նուիրուած է Պալմիրաի (1940) (ջութակի փոխադրումը եւ կատարումը՝ Ժան Փիեռ Ռամբալի), իսկ թաւջութակինը՝ Սվիաթոսլաւ Քնուչեցսքիի (1946):

Արամ Խաչատուրեան խորհրդային Միութեան մէջ Սերգէյ Փրոքոֆիեւի եւ Տիգրան Շոստակովիչի հետ հռչակուեցաւ իբրեւ ամենէն ժողովրդական ու յաջող երաժշտահասններէն մէկը: Ան յատուկ հետաքրքրութիւն ցուցաբերեց դէպի հայրենի ժողովրդական երաժշտութիւնը եւ յաճախ ճամբորդեց դէպի Հայաստան՝ հաւաքելու եւ մշակելու համար զանոնք, յատկապէս «Գայիանէ» (նախապէս կը կոչուէր «Երջանկութիւն») պալէին ճամբար:

Իր նշանաւոր երկերէն են նաեւ Տը Վեկասի «Վալենտինայի այրին» եւ Լեռնային «Դիմակահասնագէտ» թատերախաղերու ղէս» թատերախաղերու ստեղծումը: Այս վերջինը արուեստագէտ իր տաղանդաւոր ուսանողներէն էտուր Յովհաննիսեանի կողմէն եւ ներկայացուեցաւ իբրեւ պալէ:

1943ին Խաչատուրեան յորինեց իր երկրորդ ճամբանուգը՝ «Ձանգերով ճամբանուգ», որ նուիրուած էր հոկտեմբերեան յետապիտեան 25ամեակին: Նոյն օրերուն ան յորինեց խորհրդային Հայաստանի քայլերը: Խաչատուրեանի եր-

րորդ ճամբանուգը՝ «Սիմֆոնիք պոէմ» (1947), որ յորինուած է նուագախումբի, երգչոցի եւ 15 փողերու ճամբար, նուիրուած էր նացի Գերմանիոյ դէմ տարած խորհրդային Միութեան յղթանակին՝ Բ. Ալխարհամարտի ընթացքին:

1947ին հրատարակուեցաւ իր «Մանկական ալպոմ»-ի առաջին գիրքը, իսկ երկրորդը՝ 1965ին: 1948ին Փրոքոֆիեւի եւ Շոստակովիչի հետ խորհրդային իշխանութեան կողմէն մեղադրուեցաւ երաժշտութեան մէջ ձեւապաշտ ըլլալուն համար:

1950էն սկսեալ Խաչատուրեան դասաւանդած է կենսիններու ակադեմիային ու Մոսկուայի երաժշտանոցին մէջ: Դասաւանդած է ոչ միայն հայ, այլեւ ռուս, վրացի, ռումինացի եւ ճափոնցի երաժշտահասններու մասին: Զուգահեռաբար ան հանդէս եկած է նաեւ իբրեւ մաթեմատիկոս:

1954ին ստեղծագործած «Սպարտակ» պալէին՝ իր գլուխ գործոցը, որուն փոխուած է Հայաստան,



առաջին կատարումը տեղի ունեցած է 1956ին՝ Լեւ Նինկուրատի մէջ:

1954ին անոր շնորհիւ լուծուեցաւ խորհրդային Միութեան «ժողովուրդի արուեստագէտ» կոչումը: Աւելի ուշ ստացած է նաեւ Հայաստանի (1955) եւ Վրաստանի (1963) «ժողովուրդի արուեստագէտ» կոչումը:

Ստեղծագործական կեանքին զուգահեռ Արամ Խաչատուրեան կարեւոր պաշտօններ վարած է խորհրդային երաժշտահասններու Միութեան եւ հանրային այլ կազմակերպութիւններու մէջ: 1950էն սկսեալ այցելած է շուրջ 30 երկրներ, ուր ստացած է բազմաթիւ մրցանակներ եւ ղեկավարուած է նուագախումբերով: Ան այցելած է նաեւ Լիբանանի կատարողներին:

նաեւ, ուր չորս ճամբար գեղարարած է ԵՄԻՆԵՍՓՕԻ սրահին մէջ, 8 Մայիսին մինչեւ 22 Մայիս 1961ին:

1960ական թուականներուն Խաչատուրեան յորինեց երեք ֆոնչերթ-Ռաֆայիլ, ձօնուած՝ հռչակաւոր մենակատարներու, ջութակի Լէոնիդ Գոկանի, թաւջութակի՝ Մըթիսլավ Ռոստրոփովիչի եւ դաշնամուրի: 1970ական թուականներուն ան յորինեց երեք սոնատ՝ թաւջութակ (1974), ջութակ (1975) եւ ջութ (1976): Խաչատուրեան հեղինակ է նաեւ ռուսական եւ արեւմտեան բազմաթիւ ժապաւէն եւ թատերադրութիւններու երաժշտութեանց, ինչպէս նաեւ փողերային, սենեկային, հայրենասիրական եւ ժողովրդային երգերու:

Խաչատուրեան մահացած է 1 Մայիս 1978ին, իր 75րդ տարեդարձէն ամիս մը առաջ: Անոր մարմինը կարճ ժամանակ թաղուած է Մոսկուայի երաժշտանոցը, որ իր տունն էր, ապա 6 Մայիս 1978ին տեղափոխուեց Գործոցը, որուն փոխուած է Հայաստան:

ԲԱՄԲԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Մեր երիտասարդները հետամուտ են դարուն ստեղծած բոլոր շարժումներուն հետեւելու, ընդօրինակելու պատկերասփիւռէն հետասփռուած արտասովոր երեւոյթները, սեւամորթներու կամ սպիտակամորթներու յոռի նորածնութիւնները: Մեր երիտասարդներէն ոմանք տարիներէ ի վեր կը հետեւին ականջի օղ գործածելու, երբեմն մէկ ականջին, երբեմն ալ՝ երկու ականջին: Արդէն ծամբեմ ալ երկարած են աղջիկներու ման: Որքան կը փափաքին էգի կերպարանը ունենալ:

Իսկ մեր դեռատի աղջիկներն ալ կիսամերկ պտտիլը լաւագոյն ՄՈՏԱԿ կը նկատեն, չեն սիրեր ծամեղ, կ'ուզեն, որ յաւերժական ամառ ըլլայ...

Իրագրելներ կ'ըսեն, քէ ականջի օղեր սիրող երիտասարդներ եւ կիսամերկ երեւնալ փափաքող աղջիկներ կը ժամադրուին ժինգիէի կողմէրը գտնուող զբօսավայրերը, ու հազիւ նահր Քեյպի պոտիկ «Թիւնէ»-ը անցնին, երիտասարդները կը կարեն ականջի օղերը, իսկ աղջիկները... Անոնք ալ իրենց հետ շալկած փոխնորդ պլուզը կը հագնին՝ ցոյց տալով իրենց իգական «շնորհ»ները: Ուշ գիշերին վերադարձին անոնք կրկին կը հագնին իրենց սովորական, մարմին ծածկող պլուզերը, իսկ տղաքն ալ կը հանեն օղերը...

Որքան պատուախնդիր են մեր նորեկները երիտասարդներն ու աղջիկները:

- Տղա՛ս, գնա՛, գու՛ր, գու՛ր, գու՛ր, բայց ժամը 1:00ին տունը եղիր: Անքուն մնալը կը հիւանդացնէ, կը պատուիրէ երիտասարդին հայրը: Երիտասարդը ժամադրուած է ընկերուհիին հետ: Կ'երթան զբօսատուն մը, կը գուրեմանան երկար: Երբ կէս գիշերը կ'անցնի, տղան կ'ըսէ աղջկան. - Երթանք, հօրս խոստացայ, որ ժամը 1:00ին տունը կ'ըլլամ: Նազելի օրիորդը կը պատասխանէ զարմացած. - Բայց ես օրս խոստացայ ժամը 3:00ին վերադառնալ...

ԱԿՍԱՐԿ

ԵԱՀԿԻ ՄԱՐԴԻԿԸ

Այս օրերուն արտասովոր եռուգեռ մը կայ երոպա-Հայաստան-Ազրպեյճան գիծին վրայ: ԵԱՀԿի բազմաճակատ ղեկավարները ԵԱՀԿի բազմաճակատ ղեկավարները...

Երեւան կը գտնուի ԵԱՀԿի գործող նախագահը՝ Հովհաննիս արտաքին գործոց նախարարը: Միև կողմէ, ԵԱՀԿի Միմարի խմբակի համաճակատագրերը Երեւան կը սպասուին՝ հաւանաբար մեր առաջարկներ բերելով իրենց հետ:

Ազրպեյճանի ընտրութիւններուն հետեւող ԵԱՀԿի պատուիրակութեան ղեկավար Ալքէր կ'ուզէ օր առաջ փակուած նկատել ընտրական բոլորակները՝ անշուշտ Իհիմա Ալիեւի ընտրութիւնները օրինակացնելու միտող մեղմաբանութիւններով: Միմարի խումբը, իր շրջան այցելութեամբ արդէն իսկ փակած է այդ բոլորակները՝ Պիզնա Կ ԵՈՒՆԵՍԿՈ Ի մթնոլորտ մը ստեղծելով:

Բայց որո՞ւ հոգը սպանելները, բախումները, եւ երոպացիներու իսկ վկայութեամբ ազդակող գեղծարարութիւնները: «Կարելոք» այն է, որ կեանքը պէտք է առաջ երթայ: Տարբեր խօսքով, օր առաջ պէտք է «խաղաղած» ու բնականոն հունի մէջ տեսնել Ազրպեյճանը, որպէսզի բարիւղի երոպական, ամբիկիկան եւ ուսական ընկերութիւններուն շահերը չվտանգուին: Հապա եթէ ԵԱՀԿի ղեկավարը նշմարտութիւնը խօսին ու ըսեն, թէ ընտրութիւնները պէտք է կրկնել, որովհետեւ Ազրպեյճան ձայնողած է արդար ընտրութիւններ կազմակերպելու իր ճիգին մէջ (Եթէ նման ճիգ եղած է անշուշտ):

Ընտրութիւններէն երկու օր առաջ արդէն Մարդկային իրաւանց դեռ կազմակերպութիւնը յայտարարած էր, թէ տեղի ունենալիք քուէարկութիւնները անարդար են՝ տալով իր հիմնարարութիւնները: Այս կազմակերպութիւնը բարիւղային շահեր չունի Ազրպեյճանի մէջ, հետեւաբար պատճառ չունի լուրսեան պատ քաշելու Ալքէրի խոշտանգումին լուրին շուրջ: Բայց այս բոլորը ցոյց կու տան, որ «ԵԱՀԿի մարդիկը» իրենց բուրդը ունին մանելիք:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԿԷՍ

Օրս մահամերձ՝ Դատարկութեան իմաստը կարդաց Հայելիին բառարանէն... Ու լեցունքս կհսով:

Դատարկութեան Գիտակցութեամբ Կէս - լեցուն, Երէկն ու այսօրը հանդիպեցան անշուշտ, Ճամբուն վրայ սպասումի Ուրիշ քունս փախած էր...

Ձեի գտած կարիւր մը քեզմէ՝ Որ ողորդէր սպիտակ, Հիւլէ՛ մը քեզմէ՛՝ Որ լիացնէր տիեզերքս...

Երէկն ու այսօրը Կը հանդիպին դէռ, ամէ՛ն օր, Ճամբաներուն վրայ բոլոր... Բայց մենք արդէն մէջ-մէջ գիծեր վուզահեն, Հորիզոնի վրայ երեւցող մեր հանդիպան կէտով խաբուած՝ Դեռ կը սպասենք անպիշուվ, Անքուն եւ մի՛շտ կէս - լեցուն...

ԱՓՍՈՍԱՆԹ

Նոր խօսքի բեզասն արդէն Ախտոն մէջ մաշեցան: Ան ոչ մէկ օր այցի գնաց Իր հայրենի ամպերուն: Վաղը երբ իր մարմինն՝ հողին հոգին՝ շողին յանձնուի, Պիտի ճարտար արհեստաբ Բառի փոխան անոր գարի տրուելուն...:

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ն. ԱՂԱՍԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 24 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան-Շ. Ս. Ը. Ս.» Սարգսանյակութային համալիրին մէջ:

ԾԱՆՕԹ.- Երեկոյեան ժամը 8:30ին մերկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի: ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԸՆԴՈՒՆԻԼ ՀԱՅ ՄՏԱԴՈՐԱԿԱՆԻՆ ԴԵՐԸ

Հարցեր կան, որոնք մեր առօրեայ մտահոգութիւններուն եւ գանգան ընդլայնող մասն են կազմեր: Մտաւորականութիւնը բացակայ է հայ կեանքին:

Ի՞նչ է մտաւորականին իսկական դերը: Ան նամական տան պաշտօնեայ չէ, որ գործնական աշխատանքներ կատարէ, ծրարներու ծանրութիւնը ճշդէ եւ Համապատասխան գործառնողութիւնը տայ: Ատամնաբուժ ալ չէ, որ մեր ատամները խնամէ, փորէ, տաշէ, գեղեցկացնէ կամ արմատէն հանէ: Ան ինքնատիպ այն դէտն է, որ իր տեսանկիւնը ունի, ինքնիրեն իրաւունք չունի իր հասկացած ձեւով դատելու մեր ժամանակը եւ մեզ, ընթացիկ եւ ընդունելի միջինին տարբեր ոճով եւ մտայնութեամբ: Հայկական ընկերութիւնը ցարդ չէ ընդունած գետի հունէն անջատող մտաւորականին այդ իրաւունքը, անոր նկատմամբ վերապահ է, եթէ քաղաքավար տարագ գործածենք, իսկ եթէ նուազ քաղաքավար ըլլանք, բացայայտ կերպով կրնանք ըսել որ գայն կը մերժենք, կը հայածենք, աւելի գէշ՝ լուրջի չենք առնել: Եթէ լուսարձակները բանաւր մեր ընկերութիւններն վրայ, առարկայական մտայնութեամբ ցուցաբերենք եւ ուզենք մեր տեղաշարժը քաղաքացիներէն փորձ կատարել, արդե՞ք պիտի չեզոքակացնենք, որ մենք ենք պատճառը տեղաշարժին: Մտաւորականի քննադատող, երբեմն ծայրայեղ խօսքի բացակայութիւնը ընկերութիւնը կը պարպէ իր ուժականութենէն:

Մտաւորականին համար օգի է ըլլալի չափ անհրաժեշտ է ազատութիւնը եւ մասամբ նաեւ՝ նիւթական անկախութիւնը: Հայ իրականութեան մէջ մտաւորականին նիւթական անկախութեան դաշտը խիստ սահմանափակ է, քանի որ կառոյցները կը հակադրուին պետութեան կամ քաղաքական կազմակերպութիւններուն կողմէ, մանաւանդ՝ հաղորդակցական միջոցները: Տարբեր կարծիքը կամ քննադատութիւնը կը նկատուին ընդդիմութիւն եւ թշնամանք: Սփիւռնի պարագային այս բացասականութիւնները շեշտուած են եւ իրենց կոչումին հարագատութիւնը կը յաջողին պահել անոնք, որոնք հայկական միջավայրէ դուրս աշխատանք ունին, հետեւաբար, նիւթական անկախութիւն՝ հայ հաւաքականութեան յարաբերաբար:

Տարիները կը յաջորդեն իրարու, ժողովները կը յաջորդեն իրարու, ընկերութիւնը կը կծկուի, կը հաստատենք սնամէջ երեւելիական դրութիւն, հանգամանքներ կը պահպանենք, բայց մեր համայնքները յարդի պէս հովին կը տրուին: Իմաստուն գործնապաշտութեամբ կ'եզրակացնենք, որ հինգ հարիւր հազար հաշուող համայնքէն երեսուն կամ քառասուն հազարը մասնակից է հայ կեանքին, բախտաւոր պահանջն է:

ՆԱՅԱՑԻՒՄԸ - ՆԱՅԱՑԻՒՄԸ - ՆԱՅԱՑԻՒՄԸ

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԸ» Այս խորագիրով է «Ղարաբաղ» հարաւային կողմակի կողմանքը» ենթախորագիրով ֆրանսական «Raids» ամսագրերի Հոկտեմբերի թիւին մէջ բանակի ուժերու գինամթերքի գունաւոր եւ տպակորիչ լուսանկարներով 14 էջ յատկացուած է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան: Ըստ «Յառաջ» օրագրերին, ֆրանսական հրապարակումին զլիւսուոր նիւթը հանդիսացած է զարաբաղեան պատերազմը: Գլխաւոր յօդուածը գրած է Իվ Տրպէ, որ նաեւ լուսանկարներուն հեղինակն է:

Ձինեալ բախումներուն եւ ուղեւորութիւններուն յատկացուած մասնագիտական ամսագրերը բաւական մանրամասն կը նկարագրէ զարաբաղեան պատերազմին անցքերը: Լեւոնային Ղարաբաղի բանակին ունեցած գինամթերքին տեսականին, արցախիցի գինուորներու մեծ մարտունակութիւնը, անսպիթաք կարգապահութիւնը եւ այլն:

ՄԱՀ՝ ԳԵՈՐԳ ԱՐԱՋԵԱՆԻ

6 Հոկտեմբերին Երեւանի մէջ իր մահականացուն կնքած է զբականագէտ, թատերագէտ, արուեստի գործիչ Գէորգ Աբաջեանը, 83 տարեկանին: Մնած էր Լուսին Ծնող գիւղը, մասնակցած էր Համաշխարհային Բ. պատերազմին: Թատերական ասպարէզ մտած է 1945ին՝ դառնալով Գիւմրիի (նախկին Լենինական) Տրամաթիքական թատրոնի դերասան:

ԱՐՅԱԽԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԵՐԸ՝ ՈՍԿԻԷ ՄԵՏԱԼԻ ՏԵՐ

Պարսելոնայի ֆուլթուրիք երաժշտութեան «Եւրոպան եւ անոր երգերը» միջազգային երգ-մրցումին մասնակցած է Արցախի Պետական երգչախումբը եւ ոսկիէ մետալի արժանացած է: Նիւն Գրիգորեանի ղեկավարած խումբը երգած է կտորներ կոմիտասի գործերէն՝ արժանանալով արուեստագէտներու եւ փառաստանի կազմակերպիչ կոմիտէի բարձր գնահատականին:

Հետաքրքրական եղած է սակայն ազրպէյճանական հակազդեցութիւնը. ազրպէյճանացի յօրինող Կուլիբե յայտարարած է, թէ Արցախի «անջատողականները» ազրպէյճանական երաժշտութիւնը կը գողնան եւ կ'իւրացնեն: Ան բազմաթիւ յերիւրանքներով վարկաբեկած է Արցախը եւ անոր Պետական երգչախումբը:

ՆԿԱՐԻՉ ԱԼԷՔԱՆԸՐ ԲԱՄԲԱՆԻԿ-ՄԵԼԻՔԵԱՆԻ ՊԵՏԱՆՆԵՐԸ՝ ԳՈՂՅՈՒՄԸ

20րդ դարու սկիզբի ծանօթ գեղանկարիչ Ալեքսանտր Բամբէնիկ-Մելիքեանի 21 պատանները գողցուած են անոր աղկան Երեւանի բնակարանէն: Լաւինիա Բամբէնիկ-Մելիքեան Մոսկուայէն տուն վերադարձին տեսած է կատարուածը: Բնակարանէն գողցուած էին 21 պատաններ, հոն պահուած 39 պատաններէն:

Լաւինիա Բամբէնիկ-Մելիքեանի համոզումը այն է, որ գողութիւնը նախապատրաստուած է ամենայն լրջութեամբ. գողցուած են գեղանկարիչին լուսագոյն գործերը, ինչ որ մտածել կու տայ, թէ գողերը կամ անոնց պատուիրակները արուեստի արժէքներու գիտակ մարդիկ եղած են:

Ալեքսանտր Բամբէնիկ-Մելիքեան ապրած է աշխատած է Թիֆլիս: Իրմէ պահպանուած են շուրջ 200 պատաններ, որոնց կէսը կը գտնուի իր երեք ժառանգորդներուն թով, իսկ մնացեալը Երեւանի, Թիֆլիսի, Մոսկուայի, Ս. Փեթերսպուրկի թանգարաններուն, ցուցասրահներուն եւ մասնաւոր անձերու հաւաքածոններուն մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎԱԿԵՐԱՅՈՒՑ ԹՐԵՆՔԵՐՈՒ ԸՐԱՔ ՄԸ

Հայաստանի նախագահ Ռոպոյթ Բոչարեան 20 Հոկտեմբերին ստորագրած է Ազգային Ժողովի ընդունած «Երկակի նշանակութեան ապրանքներու եւ սարքերու արտահանման, ինչպէս նաեւ Հայաստանի հողերէն անոնց տարանցիկ փոխադրման վերահսկողութեան մասին» օրէնքը:

Այս օրէնքը կը սահմանէ երկակի նշանակութեան ապրանքներու եւ սարքերու արտահանման վերահսկողութեան մարզին մէջ պետական քաղաքականութեան իրականացման սկզբունքները, վերահսկողութիւնը ապրանքներ արտահանող կառոյցներուն իրաւունքները, պարտականութիւնները եւ պատասխանատուութիւնը: Օրէնքը նաեւ կը կարգաւորէ ապրանքներու արտահանման վերահսկողութեան մարզին մէջ Հայաստանի պետական մարմիններու եւ վերահսկողող ապրանքներ արտահանող կառոյցներուն միջեւ յարաբերութիւնները:

րագային: Ինչո՞ւ չենք յարողիր ստեղծել նպաստաւոր պայմանները փոշիացող մեծամասնութիւնը ներգրաւելու: Մտաւորականութիւնը բացակայ է, չի խօսիր, չի քննադատեր ղեկավարման եղանակները, չենք ուզեր լսել այդ քննադատութիւնը (որ միայն բացասական իմաստ չունի), կը սարսափինք որ տակաւին հետաքրքրուող փոքրամասնութիւնը կը վշտացնենք: Մեր հաղորդակցական միջոցները ինչո՞ւ կոչ չեն ընել մտաւորականներուն, իմաստուն համար անոնց կարծիքը եւ դատումը մեր կեանքը յուզող բազմապիսի հարցերուն մասին: Կը լսենք ղեկավարութեան մաս կազմողները:

Հարց կրնայ ծագիլ, թէ ո՞վ է մտաւորականը: Դժուար պիտի ըլլայ պատասխանել, քանի որ նա քաշուած է հրապարակէն, առանձին է, առանձնացած, գիրք կը գրէ, արուեստով կը զրադի, զինք կը լսենք իր աշխատանքին ծիրին մէջ: Այդ քան: Ո՞չ վէճ, ո՞չ վիճարանութիւն: Այդ ձեւով մեր պարտականութիւնը կատարած կ'ըլլանք մտաւորականին նկատմամբ, իսկ ինք կրնայ խորհիլ, որ կ'ունենայ իր ներդրումը: Էական հարցերը կան որոնք մեր գանազան կազմակերպութիւններուն ու շարժումներուն առարկան չեն, մտաւորականներն ալ դադրած են իսոսելէ: Բայց եթէ էական հարցեր օրակարգ չեն եւ մտաւորականներ պիտի չխօսին անոնց մասին, ի՞նչպէս ուժականութիւն ձեռք կը բերէ համայնքը, որպէսզի կարենայ տոկալ եւ տեւել: Օրինակները չեն պակսիր. իւրաքանչիւր հայու Հայաստանի քաղաքացիութեան անկապտելի իրաւունքէն մինչեւ հայերէնախօսութեան վերականգնումը, հայերէնի ուղղագրութեան վերականգնումէն մինչեւ խորհրդային շրջանի արխիւներու հրատարակութիւնը՝ էջմիածինի արխիւներուն հրատարակութեան պատկերով:

Ազգային հաւաքականութիւն մը կրնայ գոյատեւել լուր տալով, ըսելով որ եկեղեցի նորոգուեցաւ, երգչախումբ մը մրցանակ շահեցաւ, հարիւրամեակ մը տօնուեցաւ, դեսպան մը նախագահին ներկայացուց իր հաւատարմագիրը:

Ընդհանրապէս գոհ ենք այս վիճակէն, քանի որ դիրքերը յստակ են, ոչ կ'անհանգստացնենք եւ ոչ կ'անհանգստանանք, դժուար նկատուած մեր կեանքին մէջ նոր խոչընդոտներ չենք ստեղծել:

Ջոջականութեան համար այս է լաւ կարգութիւնը՝ առանց Մովսէսի օրէնք ըլլալու:

Կը վերագառնայ՝ մտաւորականը իր դերին:

Յ. ՊԱՆԵԱՆ

Նախագահ Ռ. Բոչարեան նոյն օրը վաւերացուցած է Ազգային Ժողովին ընդունած «Ստուգումներու կազմակերպման եւ իրականացման մասին», «Պետական տուրքի մասին» օրէնքներուն մէջ կատարուած լրացումները, ինչպէս նաեւ «Պետական կենսաթոշակներուն մասին» եւ «Պետական սահմանի մասին» օրէնքներուն մէջ փոփոխութիւններ կատարելու մասին օրէնքները:

ՓԱՅՏԻ ԱՊՕՐԻՆԻ ՍՊԱՌՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի անտառային պետական ֆոնտէն փայտի ապօրինի տեղափոխման եւ սպառման նկատմամբ վերահսկողութիւնը գործադնելու նպատակով Հայաստանի բնապահպանութեան նախարարութեան պետական տեսչութեան եւ ոստիկանութեան մարզային վարչութիւններուն պաշտօնեաները 17 Հոկտեմբերին սկսեալ միացեալ ստուգումներ սկսած են Հայաստանի ճամբաներուն եւ խաչմերուկներուն վրայ: Ապօրինի կերպով փայտ տեղափոխող անձերը յայտնաբերելու համար քննութիւններ կը կատարուին նաեւ ճամբաներու պահակակէտերուն հսկողութեանէն:

Դուրս գտնուող անտառներուն (յատկապէս Լոռի եւ Տաւուշ) անտառամերձ բնակավայրերու, քաղաքներու եւ փայտի սպառման կեդրոններուն մէջ:

Դրացի պետութիւններու քաղաքացիներուն կողմէ անտառահատման դէպքերը բացառելու համար վերոյիշեալ միջոցառումները պիտի իրականանան նաեւ Հայաստանի սահմանամերձ անտառային տարածքներուն մէջ՝ այդ մասին նախապէս տեղեակ պահելով Հայաստանի սահմանապահ գործընկեր հրամանատարութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՒԱԿԱՆ ՃԱՄԲԱՅ ԿՏՐԱԾ Է ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՀԱՄԱՐԿԱՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԸ ԿԸ ՅԱՏԱՐԱՐԻ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան, մարդկային հետազոտութիւններու հայկական կեդրոնի եւ Ֆրիտրիխ Էպերթի հիմնադրամի նախաձեռնութեամբ 21 Հոկտեմբերին իր աշխատանքը սկսաւ «Հայաստանը Եւրոպայի ճամբուն վրայ» նիւթով միջազգային գիտաժողովը, որուն կը մասնակցէին Հայաստանի մէջ հաւատարմագրուած զիւրանագէտներ, պետական պաշտօնեաներ, ինչպէս նաեւ գիտութեան եւ մշակոյթի գործիչներ:

Գիտաժողովին զլիւսուոր նպատակն էր ներկայացնել Եւրոպայի մէջ համարկման ճամբուն վրայ Հայաստանի ժողովուրդին առջեւ ծագող հասարակական, մշակութային եւ քաղաքական խնդիրները:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը նշեց, որ գիտաժողովը յատկապէս կարեւոր է արտաքին քաղաքական տեսանկիւնէն, որովհետեւ Հայաստան վճարականորէն ընտրած է եւրոպական կառոյցներուն մէջ համարկուելու ճամբան: Ըստ նախարար Վարդան Օսկանեանի, Հայաստանը բաւական ճամբայ կտորած է այս ուղղութեամբ: «Մենք իրագործած ենք այն նուազագոյնը, որ անհրաժեշտ էր եւրոպական ընտանիքին սեմէն մեր ոտքը ներս դնելու համար», նշեց Վ. Օսկանեան:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան քաղաքական ծրագրումի վարչութեան պետ Աշոտ Ոսկանեան ընդգծեց, որ Հայաստան պաշտօնապէս ընտրած է եւրոպական համարկում ճամբան, եւ այդ իմաստով գիտաժողովին նիւթը շատ հրատապ չէ: Ան նկատել տուաւ, որ Եւրոպայի մէջ համարկուելու խնդիրը պէտք չէ լուծուի միայն պետական որոշումի միջոցով, որովհետեւ անկախ նախ եւ առաջ ժողովուրդը յուզող խնդիր է:

Իր կարգին Հայաստանի մէջ Գերմանիոյ դեսպան Հանս-Վուլֆ Պարթէլսը նշեց, որ եւրոպական կառոյցներուն մէջ համարկուելու գործընթացին մէջ կարեւոր է այն հանգամանքը, որ Եւրոպական խորհուրդը հետաքրքրուած է հարաւային կողմակի շրջանով:

ԱՐԹՈՒՐ ԶԱՒԱԳԵԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՍԱՆ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Ազգային Ժողովը 21 Հոկտեմբերին դադարեց բուհարկութեամբ Հայաստանի կեդրոնական Դրամատան փոխ նախագահ ընտրել Արթուր Զաւաղեանը: Ըստ Ազգային Ժողովի ժամանակաւոր հաշուիչ յանձնախումբի տուեալներուն, բուհարկութեան մասնակցած 92 պատգամաւորներէն թիւ քուէարկուած էին 84ը, ղէմ՝ 7ը, իսկ մէկ քուէաթերթիկ անվաւեր նկատուած է:

Նշենք, որ նախքան իր ընտրուելը Արթուր Զաւաղեան եղած է կեդրոնական Դրամատան նախագահի խորհրդակալ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈԳԵՐ

Լիբանանեան կեանքի երևույթներ

ԱՐՀԵՍՏԻՑ ԵՒ ԹԵՔՆԻՔ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ՀԱԶԱՐԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԺԱՄԱԳՐԱՎԱՅՐ



տօրէն բարձրացաւ արհեստից եւ թեքնիք վարժարաններ յաճախող աշակերտներուն թիւը: 1991 - 1992 տարիներուն, անոնց թիւը կը կազմէր շուրջ 7450 աշակերտի, իսկ այսօր այդ թիւը մեծ աճ արձանագրած է եւ կը հասնի 27 հազարի:

Լիբանանի մէջ արհեստից առաջին վարժարանը հիմնուած է 1904 թուականին, Սանայայի մէջ, եւ անիկա կը կոչուէր արհեստներու եւ արհեստներու կեդրոն:

Յաջորդող տարիներուն Լիբանանի կառավարութեան նեցուկով ու քաջակերտութեամբ աւելցաւ այդ վարժարաններուն թիւը, տարուէ տարի անոնք աւելի գարգացան եւ տարածուեցան: Այսօր անոնք արդէն բաւական մեծ յաւաքով զարգացան մարզեր եւ մասնագիտութիւններ, որոնք կը համապատասխանեն շուկայի պահանջներուն:

Անցեալ տարուան տուեալներով, Լիբանանի գաւազան շրջաններու մէջ տարածուած արհեստից ու թեքնիք վարժարաններուն թիւը հասած է 54ի, որոնցմէ ոմանք բաւական որակաւոր են, իսկ մնացեալները նուազ մակարդակաւոր են, սակայն ունին մեծ թիւով աշակերտներ, որովհետեւ անոնց կը թափուի աւելի յարմար է, քան առաջիններուն:

Թեքնիք եւ արհեստներու ուսման ընդհանուր տնօրէնութիւնը կը գործէ Լիբանանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հովանիին տակ: Արհեստից վարժարաններուն մէջ գոյութիւն ունեցող պետական դպրոցներուն համար լայն ծրագիրներ են հեռանկարներ գոյութիւն ունին, սակայն անոնցմէ ցարդ փոքր տոկոս մը իրականացած է, իսկ մնացեալը կը սպասէ իր ճակատագրի տնօրինման:

Լիբանանեան արհեստից վարժարաններուն մէջ կայ շուրջ 123 մասնագիտութիւն եւ անոնք ամբողջովին կը համապատասխանեն շուկայի պահանջներուն: Այս մասնագիտութիւնները իրենց կարգին բաժնուած են հիմնական երկու ճիւղերու: Արհեստներու առնչուող է անկէ անկախ: Առաջինին մէջ ընդգրկուած են ինքնաշարժներու նորոգութիւնը, ելեկտրոնային մասնագիտութիւնները, ելեկտրականութեան կապուած ճիւղերը եւ այլն, իսկ երկրորդին մէջ՝ տեղեկատուական արհեստագիտութիւնը, արուեստները, պանդոկներու վարչարարութիւնը, առեւտուրը եւ այլն:


Այս մասնագիտութիւնները դասակարգող վարժարաններուն մեծամասնութիւնը օժտուած է յատուկ սարքերով, որոնք կը ծառայեն գործնական աշխատանքներու համար, եւ անոնց ընդհանուր սակարկը հասնի միլիոնաւոր տոլարներու:

Պետական վարժարանները եւս այս ճիւղին մէջ բաւական յառաջդիմած են եւ անոնք եւս ունին համապատասխան արդիական սարքեր եւ գործիքներ:

Լիբանանեան իրականութեան մէջ այսօր այս

վարժարանները ունին իրենց անժխտելի դերակատարութիւնը թէ՛ աշակերտներուն եւ թէ՛ լիբանանեան մարդու զարգացման համար: Այս պատճառով անոնք մնալուն կերպով կը փորձեն քայլ պահել նորութիւններուն եւ վերջին գարգացումներուն հետ: անոնք այսօր կը յառաջդիմեն այնքան, որքան երկրորդական վարժարանները:

Այս տարուան տուեալներով, պետական արհեստից վարժարանները ունին իրենց անժխտելի դերակատարութիւնը թէ՛ աշակերտներուն եւ թէ՛ լիբանանեան մարդու զարգացման համար: Այս պատճառով անոնք մնալուն կերպով կը փորձեն քայլ պահել նորութիւններուն եւ վերջին գարգացումներուն հետ: անոնք այսօր կը յառաջդիմեն այնքան, որքան երկրորդական վարժարանները:



սից վարժարաններ արձանագրուելու դիմում կատարած են շատ աւելի մեծ թիւով աշակերտներ, քան ինչ որ դպրոցները կրնան ընդունիլ: Ներկայիս իւրաքանչիւր մասնագիտութեան համար արձանագրուած աշակերտներուն թիւը կը հասնի 100 - 150ի:

նի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ եւ հակառակ իրենց մեծ թիւին՝ բոլորն ալ ունին մեծ թիւով աշակերտներ, որոնք դպրոց կը յաճախեն ըստ իրենց ժամերու յարմարութեան: Անոնք իրենց դասերը բաց կը պահեն մինչեւ ուշ ժամեր եւ առիթ կու տան ուսման ծարաւ անձերուն ստրկելու եւ գարգանալու:

Այս վարժարանները փաստօրէն այսօրուան իրականութեան մէջ մեծ գործ կը կատարեն, մանաւանդ եթէ նկատի ունենանք ներկայի պայմանները, սակայն անոնց փոխանցած կը թուութիւնը ո՛չ մէկ ձեւով կարելի է համեմատել համալսարանական մասնագիտութիւնը կը զարգանայ որոշ չափով եւ չի խորանար իր մարզին մէջ, որովհետեւ փաստօրէն նախկին պայմանները, սակայն անոնց փոխանցած կը թուութիւնը ո՛չ մէկ ձեւով կարելի է համեմատել համալսարանական մասնագիտութիւնը:

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ՓՈՐԸ ԳԵՂԵՑԿԱՅՆՈՂ ՄՆՆԴԱԿԱՆՈՆ

1.- ՇԵՇՏԸ ԴՆԵԼ ԲՆԱԹԵԼԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Փորի ճարպերը հալեցնելու եւ մկանները աշխուժացնելու համար օրական պէտք է սպառել մօտաւորապէս 25 միլիկրամ բնաթել պարունակող ուստիլիքներ: Բնաթելը կը գտնուի բանջարեղէններուն, պտուղներուն եւ ընդեղէններուն մէջ: Հետեւեալ ձեւով կարելի է կանոնաւորել սննդականոնը:



Առաջին շաբաթ

Առաւօտեան կրնաս ուտել բնաթելեքով հարուստ քորն ֆլեքս եւ պտուղի որբէկ տեսակ, օրինակ՝ մէկ հատ խնձոր կամ տասը հատ կեռաս, կամ ալ՝ ձմերուկի շերտ մը (մօտաւորապէս 10 կրամ բնաթել):

Երկրորդ շաբաթ

Հիմնական ճաշին հետ աւելցնել երեք մեծ դգալ ընդեղէնի տեսակ, պնակ մը աղցանի եւ կամ պնակ մը ապուրին հետ (մօտաւորապէս 16 կրամ բնաթել):

Երրորդ շաբաթ

Կեր սեւտուիլ մը՝ ցորենի լման հատիկով պատրաստուած հացով եւ պնակ մը աղցան՝ պատրաստուած կանաչ տերեւներ պարունակող բանջարեղէններով (մօտաւորապէս 20 կրամ բնաթել):

Չորրորդ շաբաթ

Կէսօրէ առաջ մէկ հատ պտուղ կեր, իսկ կէսօրէ ետք կամ իրիկունը՝ հատ մը եւս (մօտաւորապէս 24 - 25 բնաթել):

2.- ՇԵՇՏԸ ԴՆԵԼ ԲԱՐՊՈՂԱՅՏՐԷՅԹՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ՝ ԻՐԲԵՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՏԵԼԻՔ

Հաւասարակշռուած սննդականոնին մէջ օրական մեր սպառած ջերմութիւն 45 - 65 առ հարիւրը պէտք է բաղկացած ըլլայ նշալով ուստիլիքներէ, այսինքն՝ մօտաւորապէս 250 կրամ քարպիտալտրիլ:

- Հեռու պէտք է մնալ արդգ սպառող շաքարէն, որ կը գտնուի անուշեղէններուն եւ կարկանդակներուն մէջ: Հեռու մնալ ֆասթ ֆուտէն, որ ընդհանրապէս ո՛չ բնաթել եւ ո՛չ կենսանիւթեր կը պարունակէ, եւ որուն մէջ կը գտնուին մեծ քանակութեամբ շաքարի տեսակներ եւ աղ, որոնք իրենց կարգին պատճառ կը դառնան փորի ուռեցքի:

- Կանոնաւորել օրուան ուտելիքները: Երեքէն հինգ անգամ բանջարեղէն (100 - 150 կրամ): Երկուքէն չորս անգամ պտուղ (100 - 150 կրամ): Գաւաթ մը նշայ պարունակող ուտելիք, ինչպէս՝ բրինձ, մաքարն, կամ կէս հատ հաց ճաշի կամ ընթրիքի ընթացքին:

3. ՔԻՉ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԱՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Հաւասարակշռուած քանակութեամբ աղի գործածութիւնը անհրաժեշտ է մարմնին համար: Ան հաւասարակշռուած կը պահէ մարմնին մէջ գտնուող հեղուկները եւ արեան զերծնշումը: Աղը ստտիւմ քլորայտը կ'օգնէ նաեւ մարմնին սննդատար ուտելիքները ծծելու մէջ, ինչպէս նաեւ մեծ դեր կը խաղայ ջրային դրութեան եւ մկաններու գործունէութեան բարելաւման մէջ: Սակայն աւելորդ քանակութեամբ աղին պատճառ կը դառնայ մարմնին մէջ ջրերի արգելափակման:

4.- ԶՈՒՐԻՆ ԱՆՀՐԱԹԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Ոմանք կը կարծեն, թէ ջրերի մեծ քանակութեամբ սպառումը փորի ուռեցք կը պատճառէ, սակայն հակառակն է ճիշդը: Զուրը կ'օգնէ աղը մարմնէն դուրս բերելու մէջ: Երբ ծարաւ կ'գտնուի, անպայման պէտք է ջրեր խմես:

5.- ԸՆԹՐԻՔԻ ՔԱՆԱԿԻՆ ՆՈՒԱԶՅՈՒՄԸ

Ծանր ընթրիքէն ետք ընդհանրապէս յանցաւոր կը զգանք, ժամանակաւորաբար յաջորդ օրը, երբ նկատենք, թէ կշիռը երկու-երեք քիլոկրամ աւելի ցոյց կու տայ: Պէտք է մտահոգուիլ, որովհետեւ այս աւելորդ քիլոկրամները ջրէն բաղկացած կ'ըլլան, սակայն, երբ ուտելու այս ձեւը սովորութիւն կը դառնայ, աւելորդ ծանրութիւնը կը վերածուի ճարպի: Այս հարցը շատ կը պատահի այն կիներուն, որոնք յաւելեալ փափաք ունին օրական ընթրիքը:

6.- ՀԵՌՈՒ ՄՆԱԿ ՊՐԿՈՒՄՆԵՐԻՑ

Ըստ վերջին ուսումնասիրութիւններուն, պրկումն ու ջրային վիճակը քորթիզին հորմոնի քանակը կը բարձրացնէ մարմնին մէջ, որ իր կերթին պատճառ կը դառնայ, որ ենթակային ախորժակը բացուի եւ միշտ փափաք ունենայ ուտելու: Զրպային վիճակը պատճառ կը դառնայ նաեւ, որ փորի մասին ճարպերը աւելնան: Այս ճարպերը հալեցնելու միակ ճարը կ'ըլլայ մարզանքը:

Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՔԱՐԸ ԵԱՐՏՈՒՄԸ

Ներկայ դարու սպառած սրբնայ գարգացման, ուսման կարեւորութեան եւ անհրաժեշտութեան վրայ դրուած շեշտին պատճառով լիբանանցի երիտասարդութեան մէջ աւելի եւս ամրապնդուած է ուսանելու եւ գարգանալու ձգտումն ու նպատակը:

Աշխատանքային ասպարէզներուն արձանագրած գարգացումը եւս կ'ընդլայնէ արհեստագիտական եւ արհեստներու մարզին մէջ մասնագիտացած անձերու պահանջը:

Լիբանանի մէջ տիրող ընկերային - տնտեսական դժուար պայմաններուն պատճառով լիբանանցի երիտասարդութիւնը, ընկերային կրթանոցի

սակայն իր մէջ ունի ուսանելու եւ գարգանալու ձգտումը:

Արհեստից եւ թեքնիք վարժարանները թէ՛ ժամանակացոյցի եւ թէ՛ կրթութեան կրթական իմաստով շատ աւելի ձեռնուած են աշխատողներուն, քան համալսարանները, որոնց կրթութեան կենտրոնները բաւական սուղ են եւ գրեթէ հրեւեակայական, գէթ՝ ինքնաշխատութեամբ ուսանիլ փափաքողներուն համար:


Առաւօտները աշխատող երիտասարդներն ու պատանիները արհեստից վարժարաններուն տուած առիթէն օգտուելով գիշերները դպրոց կը յաճախեն եւ իրենց նախաձեռնած ճիւղը ընտրելով՝ իրենց

ԱՐՀԵՍՏԻՑ ԵՒ ԹԵՔՆԻՔ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ 2001 - 2002 ՏԱՐԵՐԱՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԸՍՏ ԱՍՏԱԳՈՐԾՆԵՐՈՒ			
ՄԱՍՏԱԳՈՐԾՆԵՐՈՒ	ՈՒՍՏՈՂՈՒԹԻՒՆ		
	Տղամ	Աղջիկներ	Ընդ.
Հիւանդապահութիւն	355	1828	2183
Չբուաչրութիւն	-	101	101
Հիւրընկալութեան արհեստ	2186	1178	3364
Բնիկանոր սնունդ	3692	3693	7385
Արհեստներու վերաբիւրջ մասնագիտութիւններ	9488	1054	10542
Տեղեկատուական արհեստագիտութիւն	831	1248	2088
Արհեստավարութիւն	873	-	873
ԸՆԴՀԱՆՈՒՐ	17.425	9101	26.536

աշխատելու պարտադրանքին առջեւ: Այս իրավիճակին մէջ գտնուողներուն թիւը կը հանդիսանայ երիտասարդութեան ընդհանուր թիւին մեծամասնութիւնը, որ անկարող է համալսարան յաճախելու:

Կարելիութեան սահմաններուն մէջ կը փորձեն առաւելագոյն կրթութիւնը ստանալ եւ մասնագիտութիւն ձեռք ձգել:

Այս պատճառներով վերջին տարիներուն Լիբանանի մէջ անհամեմատ





Կանոցական

ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

ՕՍԹԵՆՓՈՐՈՋԸ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ



50 ՏԱՐԵԿԱՆԻ ԱՆՁԱՆԳԸ

Ոսկորները ապրող հիւսուածքներ են, երիտասարդ տարիքին անոնք մշտականորէն կը վերանորոգուին: Դաշտանադադարէն սկսեալ հարցերը կը բարդանան կիններուն մօտ: Վերանորոգումը, որ կը կատարուէր որոշ հորմոններու ազդեցութեան տակ, կը դանդաղի եւ ամբողջովին կը դադարի դաշտանադադարին հետ, իսկ ոսկորները կը սկսին պարպուիլ, տկարանալ... Ահա թէ ինչու կինները աւելի ենթակայ են այս հիւանդութեան, քան տղայները, նրահարները, նստակեաց կեանք ապրողները, ծխողները եւ ընտանիքին մէջ օսթոփոքոքի պարագայ ունեցողները:

«տարեւ օր մըն ալ... կոտորելու ատենը մը: Շատեր կոտորուածքը ծերութեան կամ արկածի հետեւանք կը նկատեն, մինչդեռ պարզապէս օսթոփոքոքէ կը տառապին: Ամէնէն ընթացիկ արկածներէն մէկը դաստակի կոտորուածքն է, որ դաշտանադադարէն անմիջապէս ետք կը պատահի: Այլ ազդանշան մըն է ողնայարի կամ կռնակի ցաւը: Եթէ կ'ուզենք ստոյգ ախտաճանաչում մը կատարել, միակ միջոցը օսթոտագնաթոմէթրի կոչուած քննութիւնն է, որ կը չափէ ոսկորներուն խտութիւնը եւ ճշգրիտ պատկեր մը կու տայ ոսկորներուն վիճակին մասին:»

Ի վնասակար են, քան օգուտները:

ՆԱԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

Տոկուն ոսկորները կը կազմուին 11 - 17 տարիքներուն միջեւ:

Տղոց պարագային՝ 13 - 17 տարեկանին, իսկ աղջիկներունը՝ 11 - 14ին:

Այս տարիներուն է, որ ոսկորը կը թանձրանայ եւ անհրաժեշտ խտութիւնը

ԿԱՆԽԱՐԳԻԼՈՂ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ

Օսթոփոքոքը

կանխարգիլելու լաւագոյն միջոցներէն մէկը կիրով հարուստ սննդականոն մը որդեգրելն է: Իսկ դաշտանադադարէն ետք օրական 1000-1500 միլիկրամ կիր պէտք է ստանալ պանիրի, մածուկի, կաթի, բայց նաեւ՝ Տէ. կենսասինթոզով զօրացած դեղահատերու միջոցով:

Մարգանքը եւ յատկապէս քալցիւմը չափազանց օգտակար են՝ ոսկորներուն խտութիւնը պահպանելու համար:

Վերջին տարիներուն հորմոնային դարմանումը եւս օսթոփոքոքը կանխարգիլելու ազդու միջոց մը կը նկատուէր, մինչդեռ ներկայիս դարմանումի այս միջոցը գրեթէ վերջնականորէն մերժուած է, որուն պատճառով շատ աւելի

կ'ապահովէ: Պէտք է աջակցել հսկել, որ պատանիները եւ յատկապէս պարմանուհիները կիրով համարուած սնունդ ստանան՝ օրական առնուազն 1,200 միլիկրամ կիր սպառելով:

Թելադրելի է, որ այս տարիքի պատանիները սպառեն առնուազն 4 տեսակ կաթնեղէն, մինչդեռ անոնք յաճախ բաժակ մը կաթը կը փոխարինեն պտուղի հիւթով կամ... փեփսիով:

Միւս կողմէ, մարգանքն ալ այս տարիքին իր կարեւոր դերը կը խաղայ ամուր եւ առողջ ոսկորներ ապահովելու համար: Հոս նշենք նաեւ, որ ծխախոտը կը վնասէ մեր ոսկորներուն առողջութեան:

ՍՏՈՒԳԵՆԸ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

ՃԻՇԴ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ԲՈՅՍԵՐՈՒ ԽՆԱՄՔԻՆ ՄԱՍԻՆ




1

Երբ նոր բոյս մը գնենք, պէտք է զայն փոխադրենք աւելի մեծ թաղարի մը մէջ:

ՈՉ անմիջապէս, քանի որ մեծ թաղարի մէջ փոխադրուելու պարագային, բոյսը նոր արմատներ պիտի արձակէ, որուն պատճառով պիտի տուժէ անոր ան ու ծաղկումը: Հետեւաբար կ'արժէ որոշ ժամանակ մը սպասել: Իսկ փոխադրութեան պարագային, նոր թաղարը հազիւ 10 սմ. աւելի մեծ պէտք է ըլլայ, քան նախորդը:

2

Քաղցրիկները ջուրի պէտք չունին եւ զանոնք մաքրելու համար կարելի է սփրէյով ջուր սրսկել անոնց վրայ:



ՍԽԱԼ. քաղցրիկները երբեմն պէտք է ջրել, իսկ զանոնք մաքրելու լաւագոյն միջոցը մաքու չորացնող ելեկտրական գործիքն է (սեչուարը), աճուչ տնային ջրմամստիճանով:

3

Մոզակամանին ջուրին մէջ լուծուած ասփիրինի հատիկ մը կ'երկարէ ծաղիկներուն կեանքը:

ՍԽԱԼ. ասիկա սխալ համոզում մըն է, մինչդեռ ՍԵԼԸՆ արիւնի նման խմիչքները ջուրին աւելցնելով՝ կրնանք առողջ եւ աւելի երկար պահել ծաղիկները:

4



Գարեջուրը շատ լաւ կը մաքրէ բոյսերուն ճերմկած տերեւները:

ՃԻՇԴ. կիրի պատճառով ճերմկած բոյսերուն տերեւները կարելի է մաքրել գարեջուրով կամ կաթով: Թելադրելի է վերջին անգամ զանոնք շփել հանքային ջուրով:

5

Մառ մը աւելի լաւ կը տոկայ հովին, եթէ խորունկ ցանուած ըլլայ:

ՍԽԱԼ. առածը կ'ըսէ. «Շատ խորունկ փորուած ծառը անդամալոյծ է...»:

6

Ռեհանը եւ շեշտուած բոյրով այլ բոյսեր կը քշեն մտեղներն ու զանազան միջատները:

ԴԻՔԱՆՏԱԲԱՐ սխալ համոզում մըն է: Ո՛չ մտեղները, ո՛չ մրջնակները եւ ո՛չ ալ լուսիկները կը խրտչին այս բոյսերէն:

7

Քամիկան ցուրտը չի սիրեր:

ՈՉ անպայման: Անիկա 15 - 20 ջերմաստիճանի կը տոկայ, բայց երբ գետինը սառուց կապէ, զայն պէտք է ծածկոյթի տակ առնել:

ՄԵՐԱ ԲԺՅՈՒԹԻՒՆ

ԽՆԴՈՒՔԸ ԴԱՐՄԱՆ Է



Առհասարակ երեխաները 400 անգամ կը խնդան օրուան ընթացքին, մինչդեռ չափահասներուն մէկ երրորդը հազիւ 60 երկվայրկեան կը խնդայ օրուան մէջ: Բժիշկներուն կարծիքով, պէտք է յաճախ եւ սրտանց խնդայ օրուան ընթացքին, որովհետեւ խնդուքը դարման է թէ՛ մեր մարմինն եւ թէ՛ մտքին:

Երբ կը խնդանք, մեր ուղեղն ու ամբողջ մարմինն է, որ կ'օգտուին: Նախ՝ դէմքին բոլոր մկանները կը շարժին, արիւնը կը շրջագայի, մորթը «կ'ոտոգուի» եւ կը մարձուի:

Երբ կը խնդանք, մեր ստոծանին կ'աշխուժանայ, թոքերուն մէջ աւելի օդ կը մտնէ եւ մարմինը աւելի թթուածին կը ստանայ:

Խնդուքը նաեւ կը պայքարի արեան գերճնշումին դէմ՝ դանդաղեցնելով սրտին զարկերը եւ ընդլայնելով երակները:

«Ամբիթը Բարթաստիշլըն» վերջին համագումարին ներկայացուած ուսումնասիրութեան մը համաձայն, սրամիտ եւ յաճախ խնդացող անձերը մեծ տոկոսով պաշտպանուած են սրտի կաթուածէ:

Խնդացող անձերուն ուղեղը կ'արտադրէ նիւթեր, որոնք բարեգործ դեր կը խաղան մեր առողջութեան համար:

Այսպէս ԱՆՏՈՐՅԻՆ կոչուած նիւթը, որ մորֆինի ընտանիքին կը պատկանի, ցաւազրկիչ է եւ կը հանդարտեցնէ:

ՍԵՐՈՒՆԻՆԸ եւս կը հանդարտեցնէ եւ քուն կու տայ:

ՔԱԹԵՔՈՒԱՄԻՆները, որոնք հորմոններ են, կը զօրացնեն մարմինն դիմադրականութիւնը:

Այս բոլորը իմանալէ ետք, կարելի է ինքզինք խնդուքէ զրկել...»

ԽՈՒՍԱԳԻՐ

ՔԱՄԱՄՊԻՐԻ ՔՐՈՒՔԻԹՆԵՐ

- Բաղադրութիւն՝ 4 անճի համար.
- Մէկ կաղապար քամապար պանիր:
- Երկու հաւկիթ:
- 50 կրամ Փրանսական հացի միջուկ:
- 50 կրամ ընկոյզ:
- 40 կրամ ալիւր:
- 25 սանթիլիթր բուսական ձէթ:

Պատրաստութիւն.

Քամապարի կեղեւը բերթել դանակով մը, ապա կտրու կաղապարը 8 կտորի բաժնել:

Հարիչէ (միքսըր) անցնել ընկոյզը, ապա հացի միջուկը եւ իրարու խառնել:

Փոս ամանի մը մէջ կոտորել հաւկիթները, մէկ ապուրի դրել ձէթ եւ պտուղնց մը ճերմակ համեմ աւելցնել, ապա պատառաքաղով զարնել:

Պանիրը կտորները ալիւրին, ապա՝ հաւկիթին եւ վերջապէս՝ ընկոյզով խառնուրդին մէջ թաթխել:

Ձէթը տաքցնել եւ պանիրի կտորները տապակել 2 - 3 վայրկեան, մինչեւ որ ոսկեգոյն դառնան: Թելադրելի է տապակը չխճողել, որպէսզի պանիրի կտորները իրարու չփակին եւ համաչափ տապակուին:

Տապակուած պանիրները ծծուն թուղթի վրայ փոխադրել եւ տաք հրամցնել: Թելադրելի է հետո հրամցնել կանաչ աղցան մը՝ ընկոյզի միջուկներով զարդարուած:

Պատրաստեց՝ ՇՈՒԾԻԿ ՍԱԻՍԱԳՍԵԱՆ

ՎԵՐԱՄՈՒՏ

HRAYRO DRAWING ART CENTER






ՅԱՅՏՆԱԲԵՐԷ ԶԱՒԿԻԴ ՊԱՀՈՒԱԾ ԶԻՐՔԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՍԵԼ ԱՆԹԻԼԻԱՍ, ՄՉՀԷՐԻ ՇՐՁԱՆ ՀԵՌ. 03-944686



Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՃԱՏՐԱԿԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏՈՒՄ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ

ՄԵՂՐԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ՀՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՅԱԿՈՔ ԹՈՍՈՒՆԵԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ ՄԵԿՆԵՑԱՆ



Այսօր Պեյրոնի Թեատրոնի մեկնեցաւ ճատրակի Լիբանանի երիտասարդական հաւաքականը, որուն ութ մարզիկ-մարզիկուհիները իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հալիպիտի Բալիթէա աւանին մէջ, 23 Հոկտեմբեր - 3 Նոյեմբեր ժամանակամիջոցին տեղի ունենալիք ճատրակի աշխարհի երիտասարդական ախոյեանութեան:


Ճատրակի վարպետ եւ կրտսերներու մարզիչ Ապտէլ Ալիյ Մահմուտի գլխաւորած Լիբանանի երիտասարդական հաւաքականին մաս կը կազմեն երեք Հ. Մ. Ը. Մ. ակաւ ներկայացուցիչներ՝ Մեղրի Կիրակոսեան, Հրակ Փափազեան եւ Յակոբ Թոսուեան, որոնք առաջին անգամ ըլլալով պիտի փորձեն չափուի իրենց հասակակից միջազգային վարպետներու հետ:

Հ. Մ. Ը. Մ. ի մտերմութեամբ մասնաճիւղին մէջ, եղբ. հաշիկ Մուրատեանի ցուցմունքներով իրենց առաջին քայլերը նետած մեր կրտսերները կայացուցիչները, այսպէսով, մուտք պիտի գործեն միջազգային մարտիչ, հետեւելով պիտի ընթանան Հ. Մ. Ը. Մ. ակաւ ստղեր՝ Բնար եւ Սիւլան Մուրատեան քոյրերու եւ Սերժ Յովսէփեանի հաստատ քայլերուն: Մեղրի Կիրակոսեան պիտի մասնակցի 12 տարեկանէն վար աղջկանց մրցաշարքին, Հրակ Փափազեան՝ նոյն դասակարգի տղոց մրցումներուն, իսկ Յակոբ Թոսուեան՝ 16 տարեկանէն վար տղոց մրցաշարքին:

1020 երկուտ երիտասարդ ու պատանի ճատրակ խաղացողներ հիւրընկալելու պատրաստ այս ախոյեանութիւնը, վստահաբար, Լիբանանի անփորձ ներկայացուցիչներուն համար պիտի ըլլայ օգտակար առիթ մը՝ առնուազն միջազգային հանդիպումներու փորձառութիւն ձեռք ձգելու առումով:

Աւելի ուշ Լիբանանի ազգային երիտասարդական հաւաքականին պիտի միանայ Լիբանանի ճատրակի ֆետերատիւնի նախագահ տոքթ. Ամար Հուրի՝ մասնակցելու համար ճատրակի աշխարհի համաժողովին:

ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՀԻԿԱՏՈՆ



Պալի մէջ (Չուիցերիա) տեղի ունեցող տղոց միջազգային մրցաշարքին Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, 4րդ դասում (մրցաշարքին գծով) արժանութիւնահայ Դաւիթ Նալպանտեան երէկ յաղթանակ մը արձանագրեց, 6-4 եւ 6-0 արթինքով պարտութեան մատնելով սպանացի Ռուպէն Ռամիրէս Վիլատոն:

Իր կարգին 8րդ դասուի սպանացի Թոմի Բուպրեան յաղթանակ մը արձանագրեց 6-4 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնելով Միշել Բրաթոշիլը (Չուիցերիա):

«ՉԵՄՓԻՆԶ ԼԻԿ»

ՄԱՐՍԷՅ - ՓՈՐԹՕ՝ 2-3

«ՉԵՄՓԻՆԶ ԼԻԿ» Ֆուտբոլի մրցաշարքին, երէկ գիշեր տեղի ունեցան ութ ճակատումներ՝ Ե., Չ., Է. եւ Ը. խմբակներէն ներս:

Այսպիսով, մրցաշարքին մասնակցող 32 խումբերն ալ կատարած եղան երեքական մրցում երթի ամբողջ մրցումները:

Դարձի մրցումները պիտի սկսին յառաջիկայ Նոյեմբեր 4ին: Ա. հանգրուանի մրցումները պիտի աւարտին յառաջիկայ Նոյեմբեր 10ին, երբ արդէն իսկ յատակացած պիտի ըլլան Բ. հանգրուանին իրենց տոմարը ապահովող 16 խումբերուն անունները:

Նշենք, թէ իւրաքանչիւր խմբակի (ուր խմբակ), առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն Բ. հանգրուանին իրենց տոմարը:

- Ե. խմբակ
Չելսի (Անգլիա) - Լաքո Ռոմա (Իտալիա) 2-1
Սիւարթա Փրակա (Չեխ.) - Պեշխքաշ (Թրք.) 2-1
- Ը. խմբակ
Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Սելթա Վիլո (Սպ.) 1-0
Ա. Մէ. Միլան (Իտ.) - Յ. Բ. Պրիմ (Պելձ.) 0-1

ՍՏՈՐԵՒ՝ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

- Ե. խմբակ
Փորթո (Փորթուգալ) - Մարսէյ (Ֆրանսա)
Փարթիլան Պելլրատ (Սերպ.) - Ռեյալ Մատրիտ (Սպ.)
- Ը. խմբակ
Լաքո Ռոմա (Իտալիա) - Չելսի (Անգլիա)
Պեշխքաշ (Թրք.) - Սիւարթա Փրակա (Չեխ.)
- Ը. խմբակ
Սելթա Վիլո (Սպ.) - Այաքս Ամսթերտամ (Հոլ.)
Յ. Բ. Պրիմ (Պելձ.) - Ա. Մէ. Միլան (Իտ.)

ՈՒԺԱՆԻԹԻ ՄԱՐԶԷՆ ՆԵՐՍ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ «ԵՄՍ»ի նախագահը երէկ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներուն հետ ունեցաւ բանակցութիւններ, որոնցմէ ետք տեղի ունեցաւ բանակցութիւններու արդիւնքին վերաբերեալ փաստաթուղթի ստորագրութեան արարողութիւն, Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի մասնակցութեամբ: Հանդիպումէն ետք կայացուած մամուլային ասուլիսին ընթացքին Չուպայիս դիտել տուաւ, որ իր գլխաւորած ընկերութիւնը մեծ պատասխանատուութիւն կը կրէ, որովհետեւ փաստօրէն ստանձնած է Հայաստանի ուսումնական հիւսիսներու 80 առ հարիւրի ղեկավարումը: Ան նշեց, որ յուրիչ աշխատանքներ կ'ընթանան Մեծամորի կորիզային կայանի անվտանգութիւնը երաշխաւորելու համար, նաեւ միջազգային կազմակերպութիւններու աջակցութեամբ:

Ինչ կը վերաբերի արտադրանքին, Չուպայիս նշեց, որ քանի որ շաբաթէն պիտի վերսկսին Հայաստանի վրաստան ելեկտրակայանի արտադրանքները:

Անտրոյի Չուպայիս երէկ նաեւ տեսակցեցաւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի հետ, ինչպէս նաեւ այցելեց Երեւանի Պետական Համալսարան:

Մարտի 20-2004ին ԵՏԲ ՖիԿՕ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՄՊԱՐԻՉԷՆ

Փորթուգալի միջազգային մարզիկ Լուիս Ֆիլո պաշտօնապէս յայտարարեց, որ Եւրո-2004ի ֆուտբոլի մրցաշարքին ետք պիտի լքէ միջազգային ասպարէզը:

30 տարեկան Ֆիլո, ըսաւ, որ թէեւ միջազգային ասպարէզէն պիտի հեռանայ, սակայն իրեն համար մեծ ուրախութիւն պիտի ըլլայ, եթէ իրենց երկրին մէջ տեղի ունենայիք այդ մրցաշարքին բաժակ բարձրացնէ:

Նշենք, թէ Եւրո-2004ի ֆուտբոլի մրցաշարքը տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի Յունիս 12էն Յունիս 4:

«ԱՐԱՐԱՏ - 73» - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵԹԵՐԱՆՆԵՐ ՖՈՒԹՊՈՒԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Վաղը՝ Ուրբաթ, Երեւանի «Հրապրան» մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ ֆուտբոլի անախընթաց բարեկամական մրցում մը՝ «Արարատ - 73» ֆուտբոլի խումբին եւ նախկին Խորհրդային Միութեան վեթերաններու հաւաքականին միջեւ:

«Արարատ - 73»-ի նախկին ֆուտբոլի աստղեր, որոնց կարգին՝ Յովհաննէս Չանապանեան, Արկարի Անդրեասեան, Էդուարդ Մարգարով, Նիքոլայ Ղապարեան, Ալիոշա Աբրահամեան եւ ուրիշներ պիտի մասնակցին մրցումին:

Այս մրցումին մասնակցելու համար հրաւերներ ղրկուած են Սպարտակ Մոսկուայի, Տիւնի Մոսկուայի, Թորփէնո Մոսկուայի, Տիւնի Քիւրի եւ այլ ակումբներու: Այս մէկը կը նշանակէ, որ այդ մրցումը պիտի ըլլայ բաւական հետաքրքրական, որովհետեւ անցեալի բազմաթիւ ֆուտբոլիստներ, նոյն վայրի մէջ պիտի հաւաքուին:

● ՅԱՌԱՋԻԿԱՅ Նոյեմբեր 11ին, Լիոնի մէջ (Ֆրանսա) տեղի պիտի ունենայ ֆուտբոլի մրցում մը, նուիրուած քամերունցի միջազգային նախկին ֆուտբոլիստ՝ Մարք Վիլիէն Ֆոնի մահուան յիշատակին:

Քամերունի ֆուտբոլի ազգային խումբը պիտի մրցի ֆրանսական ակումբներու հաւաքականին դէմ, որուն մաս կազմող մարզիկները նախապէս Ֆոնի հետ դաշտ ներկայացած են:

ՖԻՖԱ-Ի ՆՈՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄԸ

ՖԻՖԱ-Ի երէկ հրապարակեց աշխարհի ֆուտբոլի ազգային խումբերուն այս ամսուան ընդհանուր դասաւորումը: Դասաւորման առաջին չորս դիրքերը թէեւ մնացին անփոփոխ, սակայն տեղի ունեցան բաւական մեծ փոփոխութիւններ:

Առաջին հերթին պէտք է նշել, որ պարագուիսի դիրքին վրայ կառչած կը մնայ աշխարհի ախոյեանը՝ Պրայի, իր ետին ձգելով Ֆրանսան, Սպանիան եւ Արժանթինը:


Իտալիա կարելոք ուստու մը արձանագրեց, երբ 12րդ դիրքին բարձրացաւ Տրոյ դիրքը: Անիակաւ երկիրներ մեծագոյն ուստու արձանագրող խումբերը հանդիսացան: Քուէյթ բարձրացաւ 28 դիրք, Իրաք՝ 23 դիրք, Սեուտական Արաբիա՝ 19 դիրք, իսկ Հարաւային Բորնէա՝ 17 դիրք:

Սուրիա 100րդ դիրքին բարձրացաւ 88րդ դիրք, մինչ տարբեր էր պարագան Հայաստանի եւ Լիբանանի, որոնք նահանջ արձանագրեցին: Հայաստան 103րդ դիրքին նահանջեց 109րդ, իսկ Լիբանան՝ 107րդ դիրքին 114րդ:

Ստորեւ՝ առաջին քսան դիրքերը գրաւող, ինչպէս նաեւ կարգ մը կարելոք գոյն երկիրներուն դասաւորումը (փակագիծին մէջ նշուած են անոնց անցեալ ամսուան գրաւած դիրքերը): ՖԻՖԱ-Ի յարաւոր դասաւորումը պիտի հրապարակէ յառաջիկայ 19 Նոյեմբերին:

ԿԵՏ	ԳՐԱԿԻ (Առաջին)
854	1. Պրայի (1)
827	2. Ֆրանսա (2)
777	3. Սպանիա (3)
747	4. Արժանթին (4)
746	5. Հոլանտա (7)
745	6. Անգլիա (6)
744	7. Գերմանիա (9)
742	8. Իտալիա (12)
742	8. Թուրքիա (8)
742	8. Մեքսիքա (5)
739	11. Չեխիա (9)
731	12. Մ. Նահանգներ (11)
711	13. Քամերուն (13)
707	14. Դանիա (14)
705	15. Ալի (14)
696	16. Պելձիքա (16)
686	17. Փորթուգալ (17)
681	18. Շուէտ (18)
680	19. Բուրա Ռիքա (19)
664	20. Խրուաթիա (20)
657	21. Ռումանիա (23)
654	22. Հարաւային Բորնէա (39)
634	30. Սեուտական Արաբիա (49)
620	37. Նորվեգիա (25)
617	38. Մարոք (36)
615	39. Պուկարիա (31)
614	40. Եգիպտոս (40)
599	42. Իրան (45)
592	43. Չուիցերիա (44)
556	50. Քուէյթ (78)
554	51. Ուրուգուայ (47)
553	52. Իրաք (75)
536	58. Ալկովտիա (53)
532	59. Կալէս (53)
525	67. Հունգարիա (52)
477	88. Սուրիա (100)
413	109. Հայաստան (103)
406	114. Լիբանան (107)
393	118. Հիւ. Իրլանտա (111)
388	120. Ալբանիա (119)

ԵՐՐՕ-2004ԻՆ ԵՏԲ ՖԻԿՕ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՄՊԱՐԻՉԷՆ



Լուիս Ֆիլո

Փորթուգալի միջազգային մարզիկ Լուիս Ֆիլո պաշտօնապէս յայտարարեց, որ Եւրո-2004ի ֆուտբոլի մրցաշարքին ետք պիտի լքէ միջազգային ասպարէզը:

ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐՀՈՐԴԸ ՄԵԾ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՄԱՏՐԻՏԻ ՄԵՋ ՆՈՒԻՐԱՏՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԵՆ

Իրաքի մէջ իշխող խորհուրդը կը յուսայ, որ նուիրատու երկիրներու խորհրդածոյողը, որ պիտի կայանայ Մատրիտի մէջ, պիտի փութայ օժանդակութեան՝ դրամէ կրկնապէս իր հաստատութիւններուն եւ պետական կառուցներուն: Իշխող խորհուրդը կը յուսայ նաեւ, որ Մատրիտի խորհրդածոյողին աւարտին պիտի կարենայ հաւասարէ հաւասար վարուիլ ամերիկացի ընկերակիցներուն հետ, որոնք ցարդ կը թերահաւատեն իրաքեան մարմինն ու անոր դերակատարութիւնը:

Դաշնակից ճակատի քաղաքային իշխանութիւնը իր կարգին դժգոհ է իշխող խորհուրդէն, որուն գործելակերպը բաւական դանդաղ է, նկատի ունենալով, որ գրեթէ երկու ամիս առած է կառավարութիւն մը կազմելու համար, իսկ սահմանադրութեան մշակման ձեւին մասին տակաւին ոչինչ որոշած է:

Հակառակ փոխադրած քննադատութիւններուն սակայն, երկու կողմերն ալ կ'ընդունին, որ անիւնները սկսած են դառնալու եւ թէ իշխող խորհուրդը կամայկամ անց տիրական ներկայութիւն պիտի դառնայ:

Դաշնակից ճակատի քաղաքային իշխանութեան գլխաւոր պատասխանատուն՝ Փոլ Պրեմեր էս կը յուսայ, որ Մատրիտի խորհրդածոյողը կարելի յատկացումներ պիտի կատարէ Իրաքի վերակառուցման աշխատանքին համար: Պրեմերը կը նախատեսէ յաջող խորհրդածոյող մը Մատրիտի մէջ:

Իրաքի վերաշինութեան համար ցարդ խոստացուած օժանդակութիւնները ակնկալուածէն ու նախատեսուածէն նուազ են: Համաշխարհային Դրամատան ու ՄԱԿի նախատեսութիւններուն համաձայն մինչեւ 2006 թ. միլիարտ տոլար անհրաժեշտ է անբոլջացնելու համար Իրաքը վերակառուցելու աշխատանքը:

Ամերիկեան խորհրդարանը ցարդ խոստացած է 20,3 միլիարտ տոլար, որուն կէտը սակայն կրնայ իբրեւ փոխատուութիւն տրուիլ, եթէ ծերակուտականները հաստատ մնան իրենց կեցուածքին վրայ: Ճափոն խոստացած է 1,5 միլիարտ տոլար, իսկ Եւրոպական Յանձնաժողովը՝ 200 միլիոն եւրո: Համաշխարհային Դրամատանը պատրաստ է յառաջիկայ ինչո՞ւ տարուան ընթացքին երեքէն ինչո՞ւ միլիարտ տոլար յատկացնել Իրաքի վերաշինութեան:

Եւրոպական Միութենէն բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ եւրոպական կազմակերպութիւնը 700-750 միլիոն եւրո պիտի տրամադրէ:

Միւս կողմէ, Իրաքի մէջ ամերիկացի եօթը պիւտրներ վիրաւորուեցան: Ֆալլուձայի մէջ վիրաւորուեցան չորս պիւտրներ, երբ ռումբ մը պայթեցաւ անոնց ճամբուն վրայ: Իսկ Հապալահայի մէջ վիրաւորուեցան երեք պիւտրներ, երբ ռումբ մը նետուեցաւ անոնց փոխադրակառքին վրայ:

ՃՈՐՃ ՊՈՒՇ ԵՒ ՄԵԾ...

Շարունակուած Ա. Էջէն

Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի, որ Եւրոպական Միութեան ներկայ նախագահն է, Սթրասպուրկի մէջ Եւրոխորհրդարանին յայտարարած է դիւանագիտական առաքելութեան «դրական արդիւնքը»:

Ան իշեցուցած է, որ անցեալ շաբաթ Ե. Միութեան մէկ վեհաժողովը Իրանին կոչ ուղղած էր «առանց նախապայմանի եւ անմիջապէս կնքելու, վաերացնելու եւ գործադրելու» կորիպային պէնթերոն տարածուած արգիլող համաձայնագիրին կապուած յանգումները:

Պերլուսոնի ըսած է, որ նոր վարձագումը օգտակար պիտի ըլլայ ստեղծելու պայմաններ, որոնք ըստ Ե. Միութեան՝ անհրաժեշտ են «քաջալերելու համար կարելի գործակիցի մը հետ գործակցութիւնը՝ շրջանային կայունութեան համար»:

Ճափոնի կառավարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը մամլոյ ասուլիսի մը ընթացքին ըսած է, որ Իրանի որոշումը «դրական քայլ մը» եղած է:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան որոշուած է համաձայնութիւնը, սակայն ըսած է նաեւ, որ կը քաջալերէ իրանեան իշխանութիւնները աւելի եւս գործակցելու ՄԱԿի Գործակալութեան հետ՝ առկա թղթի հարցերուն լուծման համար:

Դժգոհութեան միակ ձայնը լսուած է Իւրայէլէն, որուն պիւտրական գաղտնի սպասարկութեան պատասխանատուն Վալտեր Բալազը ըստ է, որ Իրանի կորիպային ծրագիրը 10 ամիսէն պիտի հասնի այն կէտին, ուրկէ «չի կրնար վերադառնալ, որմէ ետք դիւանագիտական միջապային միջոցառումները պիտի չկարենան կասեցնել ծրագիրը»:

ԽԱՍԵՆԵԻ ԶԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Իրանի հոգեւոր գերագոյն պետ Այաթոլլա Ալի խամենէի երէկ յայտարարած է, որ Իսլամական հանրապետութիւնը վճռած է կորիպային ուժանիւթ արտադրել եւ թէ անիկ կորիպային պէնթեր պիտի չմշակէ:

Ան ըսած է, որ արեւմտեան ամբաստանութիւնները, թէ Իրան կորիպային պէնթեր կ'ուզէ ունենայ, պարզապէս մաս կը կազմեն դաւի մը՝ «արգիլելու Իրանի, որ կորիպային գիտութիւն եւ արհեստագիտութիւն ունենայ եւ պայն արեւմտեան արհեստագիտութեան կախեալ պահելու»:

(ԱՅԺ)

ՊԱՂԵՍՏԻՆՑԻԷ ԿՈՂՋՈՒՆԵՆ ՄԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԵ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ԲԱՆԱՁԵԸ

ՄԱԿի Ընդհանուր Ժողովին կողմէ որոշեցրուած բանաձեւը իբրեւ յաղթանակ ընդունուեցաւ պաղեստինցիներուն կողմէ, մինչ Իւրայէլ անտեսեց զայն:

Ընդհանուր Ժողովը Երեքշաբթի գիշեր որոշեցրեց բանաձեւ մը, որ Իւրայէլէն կը պահանջէ քանդել Այսր-յորդանանի շրջը կառուցուող Պատը, որ ըստ հրէական պետութեան՝ ապահովութեան միջոցառում մըն է: Ընդհանուր Ժողովին բանաձեւը կ'ընդգծէ, թէ յիշեալ պատին կառուցումը կը խախտէ միջազգային օրէնքը: Բանաձեւը որոշեցրուեցաւ 144 քուէով: Իւրայէլ եւ Միացեալ Նահանգները դժգոհութեամբ իսկ 12 ուրիշներ ձեռնպահ մնացին: Բանաձեւը մտահոգութիւն կը յայտնէր յատկապէս Պատին անցած ուղիին համար, որ պաղեստինեան հողերը կը մտնէ՝ գրեթէ անկարելի դարձնելով երկու պետութեան ծրագիրի իրագործումը:

Պաղեստինեան իշխանութիւնը որոշուեց բանաձեւը, զոր նկատեց չափազանց կարեւոր՝ քաղաքական, օրինական ու բարոյական գետնի վրայ: Գլխաւոր բանազանց Սաէպ Ուրայը ըսաւ, որ բանաձեւը յաղթանակ է խաղաղութեան գործընթացին համար: Ան աւելցուց, որ երբ 144 երկիր կը քուէարկեն ի նպաստ բանաձեւին, յատկապէս զարանայ անոր կարելիութիւնը: Եսաէր Արաֆատի խորհրդատուներէն Սիմոն Ապտէլ-Նահման էս նշեց, որ ՄԱԿի անդամներուն

մեծամասնութեան կեցուածքը ցոյց կու տայ թէ որքան արդար է պաղեստինեան հարցը:

Իւրայէլ սակայն չի բաժնէր պաղեստինցի պաշտօնատարներուն կանոնադրութիւնը: Ճարտարարուեստի նախարար Էհուտ Օլմէրը անտեսեց բանաձեւը, որ արդէն իսկ որեւէ յանձնառութեան տակ չի դնէր Իւրայէլը: Ընդհանուր Ժողովի բանաձեւը որոշումի ուժ չունի: Օլմէրը աւելցուց, որ ապահովութեան պատին կառուցումը պիտի շարունակուի: Ան ըսաւ նաեւ, որ Իւրայէլ նկատի չ'առնէր ՄԱԿի մեծամասնութիւնը, որ միշտ ալ թշնամական կեցուածք որդեգրած է հրէական պետութեան եւ Միացեալ Նահանգներուն հանդէպ:

ՄԱԿի Ընդհանուր Ժողովը անցեալին ալ որոշեցրած է Իւրայէլը դատապարտող բանաձեւեր, որոնք միշտ ալ անտեսուած են հրէական պետութեան կողմէ:

ՖԱՅՄԱԼ ՖԱՅԷՂ՝ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

ՄՄՄՄ, 22 (ԱՅՓ).- Օրերէ ի վեր շրջան ընող նախատեսութիւնները իրականացան Չորեքշաբթի օր (երէկ), երբ Յորդանանի Ապտալլա Բ. թագաւորը ընդունեց հրաժարականը վարչապետ Ալի Ապու Ռադէպի եւ անմիջապէս նշանակեց պայտուի վարչակազմի պատասխանատուն՝ Ֆայսալ Ֆայէլը, հաղորդեց «Փեթրա» լրատու գործակալութիւնը:

Իր յօսքին մէջ, թագաւորը ըսած է, թէ Յորդանանի ժողովուրդը արժանի է, որ պետութիւնը աշխատի պայծառ ապագայ մը պատրաստելու համար իրեն: Ապտալլա Բ. շնորհակալութիւն յայտնեց Ապու Ռադէպի կառավարութեան, դիտել տալով սակայն, որ անոր աշխատելաձեւին մէջ կարգ մը թերութիւններ արձանագրուած են եւ ապագո՞ւ հաւաքական աշխատանքի վրայ: Ան աւելցուց, որ նոր կառավարութիւնը նախարարներու եւ ոչ թէ պաշտօնեաներու կառավարութիւն մը պէտք է ըլլայ:

Կը նախատեսուի, որ Ֆայէլ Շաբաթ օր ներկայացնէ իր դաւիճը:

Միւս կողմէ, բախումները կը շարունակուին Իւրայէլեան ուժերուն եւ պաղեստինցիներուն միջեւ: Հեպրոնի մէջ պաղեստինցի ծայրայեղական մը սպանուեցաւ բախումի մը ընթացքին: Իւրայէլեան աղբիւրներու համաձայն, պաղեստինցի պիւտր մը կը կրակ բացած է պիւտրներուն դէմ: Երկրորդ պաղեստինցի մըն ալ սպանուեցաւ Քայթիլիոյ մէջ, երբ (ըստ Իւրայէլի) ան փորձած էր փախուստ տալ անցարգելի մը:

● ԱՐԱՐԱՅԱՆ ԼԻԿԱՆ դատապարտեց Իւրայէլեան ուժերուն յարձակումը Ռամալայի եւ Կապալի դէմ:

● ԵՐՐՈ ՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ընթացիկ նմտաշրջանի նախագահ Իտալիա դատապարտեց Իւրայէլը՝ Կապալի դէմ գործուած օդանւարային յարձակումներուն համար, որոնք աւելի քան տասը զոհ խլած էին: (ԱՅՓ)

ՄԻՋԱՉՈՒՅԻՆ ԱՅՐԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԵՋ

ՌՈՒՍԻԱ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ՊԵՏՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

ՄՈՍԿՈՒՍ, 22 (ԱՅՓ).- Ռուս բարձրաստիճան պաշտօնատար մը քննադատած է այլ երկիրներու «կարճատեսութիւնը»՝ միջապային ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ:

Արտաքին գործոց առաջին փոխ նախարար Վիաչեսլաւ Տրուպիլնովը հարցալրոյցի մը մէջ ըսած է, որ հակառակ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք գոյութիւն ունեցող հակաահաբեկչական լայնածիր ճակատի մը, «կը նկատենք պետական եւ քաղաքական կարճատեսութիւն եւ երկու չափ երկու կշիռի քաղաքականութիւն», ըսած է ան:

Նշելով չէզնի հանրածանօթ ըմբոստները, Տրուպիլնով ըսած է, թէ «այլ բացատրութիւն չկայ այն տուեալին, որ Ամէն Չաքաւե կրնայ Դանիալի Բրիտանիա պատերազմի շրջիլ եւ թէ ահաբեկիչ Չելիմիան Եանտարպիւն կրնայ Քաթարի մէջ հանդարտ կեանք մը վայելել»:

Անցեալ տարի Դանիա քննադատած էր Ռուսիան, որ կը փորձէր չէզնի ղեկավար Ասլան Մախաթովի գլխաւոր բանբեր Չաքաւեի յանձնումը ապահովել: Հաւանական է, որ Բրիտանիա նման քննադատութիւն մը կատարէ յառաջիկայ քանի մը շաբաթներուն, երբ արտայանձնումի գծով դատարանային նիստերը ւարտուին:

Ըստ Տրուպիլնովի, «Քայիտա»-ի մարզիչներ ու օտար վարձկաններ» տակաւին կը գործեն Չէչենիոյ մէջ:

ՏԵՆՔՈՒՆ ԿԸ ՄԵՐԺԵ ՏԵՍԱԿՅԻԼ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԵՏ

ՆԻՎՈՍԻԱ, 22 (ԱՅՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռուսէ Տենքթաշ Չորեքշաբթի օր յայտնած է, թէ պիտի մերժէ տեսակցիլ Մ. Նահանգներու պատուիրակ թունձ Ռուսէպրնի հետ, երբ ան այս շաբաթ կիպրոս այցելէ, որովհետեւ դիւանագէտը կը փորձէ թուրք կիպրացիները իրեն դէմ լարել բանալի ընտրութիւններէ առաջ:

Ռուսէպրն, որ այս շաբաթ Անգարա այցելած է, Ռուրթ օր տեսակցութիւններ պիտի ունենայ կղզիին երկու համայնքներուն հետ:

Ըստ Տենքթաշի, իր խորհրդակալը՝ Էրկիւն Օլկիւն պիտի հանդիպի ամերիկացի պատուիրակին հետ:

Ռուսէպրնի շրջապատուող տեղի կ'ունենայ Հիւսսային Կիպրոսի մէջ կենսական նկատուող ընտրութեան նախօրեակին: Անոնց արդիւնքները կրնան շատ մեծ անդրադարձ ունենալ կղզիին ապագային վրայ:

Դիւանագէտը Անգարայի մէջ յոյս յայտնած է, որ 30 տարուան տագնապը կարելի պիտի ըլլայ լուծել, եթէ թուրք կիպրական ընդդիմադրութիւնը Դեկտեմբեր 14ին երեսփոխանական ընտրութիւններէն յաղթական դուրս գայ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԵՒՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻԼԸ

ԱԹԷՆԷ, 22 (ԱՅՓ).- Յունաստանի վարչապետ Քոսթաս Միսիթիս եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտալլա Կիլ Չորեքշաբթի օր տեսակցութիւն մը ունեցած են՝ Թուրքիոյ Եւրոպական Միութեան հետ անդամակցութեան բանակցութեանց սկսումէն առաջ տարակարծութիւնները լուծելու նպատակով:

«Միսիթիս Կիլի ըսած է, թէ 2004ը կարելի տարի մը պիտի ըլլայ Թուրքիոյ համար եւ թէ Անգարա պէտք է հիմա իսկ քայլերու դիմէ տարակարծութիւնները լուծելու համար եւ ոչ մետասաներորդ վայրկեանին», ըսած է յունական աղբիւր մը, որ ներկայ գտնուած է 45 վայրկեան տեւողութեամբ տեսակցութեան:

Թրքական աղբիւրի մը համաձայն, Կիլ ըսած է, թէ «Կիլի կը հասկնայ յունական կեցուածքը»: «Եւրոպական Միութիւնը լաւ ծիր մըն է՝ տարակարծութեանց լուծման համար», ըսած է Կիլ, ըստ աղբիւրին: Ան նաեւ յայտնած է, որ Անգարա կ'ուզէ, որ նախ անդամակցութեան գծով բանակցութեանց անչորտեմը յառաջդիմութիւն արձանագրուի, ապա տարակարծութիւնները լուծուին:

ՄՈՒՊԱՐԱՔ – ՓԱՌԸԼ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ երէկ Շարմէլ Շէյխի մէջ ընդունեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը: Հանդիպումէն ետք ամերիկացի պաշտօնատարներ յայտնեցին, որ կողմերը քննարկած են պաղեստինեան Իւրայէլեան տագնապին առնչուող խնդիրներ: «Թէ՛ Միացեալ Նահանգներ եւ թէ Եգիպտոս պիտի շարունակեն ջանք թափել կազմութեան համար պաղեստինեան կառավարութեան մը, որ կարող կ'ըլլայ ահաբեկչութեան դէմ պայքարելու եւ խաղաղութեան ձմբու քարտէսի կիրարկման գործընթացը շարունակելու»:

Փաուլը եւ Մուպարաբ նաեւ քննարկեցին Իրաքի իրավիճակը եւ Մուսանի մէջ կացութիւնը: Հանդիպումին մասնակցեցան նաեւ Միացեալ Նահանգներու Միջին Արեւելքի յատուկ պատուիրակ Ռիչիլըմ Պրոյ, Եգիպտոսի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյլիտ Ռելի եւ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Մահեր:

ԼԻԲԱՆԱՆԱՅՈՒՅՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱՉԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝

ԱՌՆԱԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ



Նոյեմբեր 18ին
ԻՒՆԷՍՔՕ ի արահին մէջ
երեկոյեան 8:30-ին

տոմսերը՝
Trading Places 01 611600, CD-Théque Ashrafieh - ABC.
Համագրայինի գրախանութ, Նարեկացի գրախանութ
եւ Ազգային Դպրոցներէն

BYBLOS BANK